

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱԹՈՒԼ ՄԵԼՍԻԿԻ ՄԿՐՏՉԱՆ

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության սեղմագիր

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մելքումյան Միքայել Սերգեյի
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Բոստանջյան Վարդան Բաբկենի
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Աբրահամյան Վահրամ Գևորգի
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հոկտեմբերի 20-ին, ժամը 14:⁰⁰-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան փող. 128

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. սեպտեմբերի 20-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

 Ս. Գևորգյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ «անվտանգություն» հասկացությունը թեև ենթարկվել է իմաստաբանական փոփոխությունների, այդուհանդերձ, մարդկային գիտակցության մեջ այն միշտ ընկալվել է, որպես վտանգի բացակայություն: Դասվելով առաջնակարգ պահանջմունքների շարքին, անվտանգությունը պայմանավորում է մարդու, պետության և հասարակության գործունեության շարժառիթները:

Այսպես, 20-րդ դարում տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումները (հատկապես՝ համաշխարհային պատերազմները) առաջին պլան մղեցին երկրների ազգային անվտանգության ապահովման անհրաժեշտությունը, ինչը հաճախ ամրագրվում էր ազգային օրենսդրություններում: Հասարակական զարգացման և տնտեսակարգի փոփոխությունները հետսոցիալիստական ճամբարի երկրներում, ճգնաժամերի և սպառնալիքների նոր տեսակների ի հայտ գալու հաճախականության մեծացմանը զուգահեռ փոխվում է նաև տնտեսական անվտանգության դերը, գործառույթները, ընդգրկման շրջանակները, ինչպես նաև դրա ապահովման սուբյեկտներն ու դրանց հնարավորությունները: Ընդ որում, անընդհատ փոփոխվող աշխարհում տնտեսական անվտանգության ապահովման գործում պետության դերն այնքան է մեծացել, որ վստահաբար կարելի է պնդել, որ այն ամբողջությամբ դարձել է պետության գործառույթ, քանի որ երկրում սոցիալ-տնտեսական բազմաթիվ հիմնախնդիրների ի հայտ գալը, որպես կանոն, պայմանավորված է պետության կողմից դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումներ չիրականացնելու, կամ ժամանակին չիրականացնելու հետ: Ուստի, պետությունը պետք է ապահովի տնտեսական անվտանգության այնպիսի մակարդակ, որը կերաշխավորի տնտեսության բնականոն գործունեության համար անհրաժեշտ ներքին և արտաքին կայունություն, աշխատանքի միջազգային բաժանման մեջ երկրի ակտիվ մասնակցություն ու մրցունակություն, միաժամանակ հիմք կլինի ազգային անվտանգության բավարար մակարդակի ապահովման համար: Այս ամենը ենթադրում է, որ անհրաժեշտ են գործիքներ և մեխանիզմներ երկրի տնտեսական անվտանգության մակարդակը չափելու (գնահատելու) համար, որոնք հնարավոր կդարձնեն առկա և վերահաս սպառնալիքների հայտաբերումը, դրանց հիման վրա նաև վերջիններիս հակազդմանն ուղղված տնտեսական քաղաքականության մշակումն ու իրականացումը:

Այս առումով, ՀՀ տնտեսական քաղաքականության խնդիրները, տնտեսության կառուցվածքային ձևախեղումները ու դրանցով պայմանավորված տնտեսական զարգացման խոչընդոտները հիմք են հանդիսացել ՀՀ տնտեսական անվտանգության համակարգի և վերջինիս ապահովման մակրոտնտեսական քաղաքականության ուսումնասիրության ու տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման համար: Վերջինս ենթադրում է տնտեսությունում առկա մակրոտնտեսական գործընթացների և երևույթների խորը, համակողմնակի ուսումնասիրություն և դրանց զարգացման միտումների ու ներքին կապերի

կանխատեսման հնարավորություն, որը հիմք կհանդիսանա պետության տնտեսական անվտանգության ապահովման հայեցակարգի մշակման համար:

Հասկանալի է, որ տնտեսական անվտանգության համակարգը չի կարող նույնը լինել բոլոր երկրների համար, յուրաքանչյուր երկրում այն ունի իր յուրահատկությունները և պետք է կառուցվի միայն տվյալ երկրին բնորոշ մարտահրավերներին և սպառնալիքներին հակազդման գործուն մեխանիզմների, գործիքների և տնտեսության վրա դրանց հնարավոր ազդեցության չափերի գնահատման հիման վրա: ՀՀ-ի դեպքում, խոսքն, ըստ էության, վերաբերում է երկրի տնտեսական անվտանգության մակարդակի կառավարման համակարգի անհրաժեշտության մասին, որը հնարավոր սպառնալիքների կանխատեսման միջոցով ազդականեր կհաղորդի տնտեսական քաղաքականության մեջ անհրաժեշտ փոփոխությունների մասին՝ ապահովելով դրանց արագ հակազդման հնարավորությունը:

Հետազոտության թեմայի շրջանակներում բարձրացված հարցերն ուսումնասիրվել են հայ և օտարերկրյա բազմաթիվ գիտնականների կողմից: Հաճախ տարբեր տեսաբանների կողմից տնտեսական անվտանգության բնորոշումներն ու դրանով պայմանավորված վերջինիս ուսումնասիրության ասպեկտները ունենում են հակասական բնույթ: Օրինակ՝ Ա.Թաթարկինը, Օ.Ռոմանովան, Ա.Կուլիինը և Վ.Յակովլևը պնդում են, որ երկրի տնտեսական անվտանգությունը դրա ներսում գործող ընկերությունների և տնտեսական այլ սուբյեկտների տնտեսական անվտանգությունների ամբողջությունն է: Նրանց հակազդում է Պ.Դրուկերն այն հիմնավորմամբ, որ շատ հաճախ երկրի տնտեսական անվտանգությունը սերտորեն փոխկապված է տարածաշրջանային անվտանգության հետ, ուստի այն չի կարող նույնականացվել ընկերությունների և առհասարակ միկրոհարթությունում տնտեսական անվտանգության խնդիրների հետ: Իհարկե, անգամ նման հակասական մեկնաբանությունների պարագայում, հետազոտողներից և ոչ մեկը տնտեսական անվտանգության բնորոշման հարցում չի սխալվում, պարզապես յուրաքանչյուրը, ելնելով ժամանակի, տարածության և իր ուսումնասիրած երկրների փորձից, առավել կարևոր է համարում այն գործոնները, որոնց խաթարումն ամենաշատը կազդի երկրի տնտեսական անվտանգության մակարդակի վրա, ուստի բնորոշման և ուսումնասիրության հիմքում դնում են հենց տվյալ գործոնի առաջնայնությունը: Ըստ այդմ, հայ և օտարերկրյա տնտեսագետների կողմից տնտեսական անվտանգությունը դիտարկվում է որպես.

- տնտեսության մեջ կայունության ապահովման ունակություն (հեղինակներ՝ Վ. Տարասցիո, Ե. Բոլսվալդ, Ն. Գոլովացկայա, Ս. Լազուրենկո, Վ. Պանկով, Թ. Մանասերյան),
- հասարակության շահերը պաշտպանելու հնարավորություն (հեղինակներ՝ Վ. Տամբովցև, Վ. Սավին, Վ. Լուկաշին, Ա. Սաֆարյան),
- երկրի տնտեսության սպառնացող արտաքին և ներքին վտանգների չեզոքացման ունակություն (հեղինակներ՝ Լ. Օսբերգ, Ա. Մահմուդ, Ի. Բոգդանով, Ս. Գլազև),

- տնտեսական անկախություն և ինքնուրույնություն (հեղինակներ՝ Ֆ. Լիստ, Ա. Մարկոսյան),
- երկրում գործող ինստիտուտների գործունեության արդյունավետություն, (համեմատաբար նոր ուղղություն է՝ ինստիտուցիոնալիզմ, հեղինակներ՝ Վ. Քեբլ, Զ. Գորդոն, Ա. Սանտոս, Վ. Սենչագով, Լ. Աբալկին):

Բնորոշումների և ուսումնասիրության ուղղությունների բազմազանությունն արդեն վկայում է, որ հասկացությունը խիստ բարդ և բազմաշերտ բնույթ ունի, որով պայմանավորվում է վերջինիս մակարդակի չափման (գնահատման) դժվարությունները: Այս նպատակով էլ բազմաթիվ հետազոտողների կողմից մշակվել են մեթոդների, ցուցանիշների և չափորոշիչների համակարգեր, որոնց միջոցով հնարավոր կլինի գնահատել երկրի տնտեսական անվտանգության մակարդակը:

Այդուհանդերձ, մինչ այժմ կիրառվող մեթոդները երկրի տնտեսական անվտանգությունը գնահատում են «ստատիկ» վիճակում, ուստի անվտանգության մակարդակի ցուցանիշների անկման միտումների կանխատեսումն ու դրանց հիման վրա համարժեք (հակազդող) տնտեսական քաղաքականության իրականացման արդյունավետությունը բարձր չէ:

Վերջինիս վկայությունն էր 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որը ևս մեկ անգամ ապացուցեց, որ մինչ օրս հետազոտությունները, չնայած իրենց համընդգրկուն բնույթին, այդուհանդերձ, տնտեսական անվտանգության համալիր գնահատում չեն ապահովում, հատկապես՝ տնտեսական անվտանգության մակարդակի անկման կանխատեսումների տեսանկյունից:

Այսինքն, առկա մեթոդներն ու գնահատման ցուցանիշների համակարգը, գոնե ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման պարագայում, ամենևին էլ իրական պատկերը չեն ապահովում:

ՀՀ տնտեսական անվտանգության համակարգի հիմնախնդիրներն ու դրա մակարդակի գնահատման հետ կապված դժվարությունները պայմանավորել են սույն հետազոտության նպատակը, խնդիրներն ու կառուցվածքը:

Վերը նշվածով է պայմանավորված հետազոտության համար ընտրված թեմայի արդիականությունը, իսկ ուսումնասիրության համար Հայաստանը դիտարկվել է տնտեսական անվտանգության տեսակետից արտաքին և ներքին սպառնալիքների համատեքստում՝ համադրական հետազոտության միջոցով բացահայտելով ՀՀ տնտեսական անվտանգության ապահովման հիմնական թիրախները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է՝ ՀՀ տնտեսական անվտանգության մակրոտնտեսական գնահատումը և վերջինիս հիման վրա առկա սպառնալիքների ու մարտահրավերների բացահայտումը, որը հիմք կհանդիսանա տնտեսական անվտանգության հայաստանյան մոդելի կառուցման համար:

Այդ նպատակի իրագործման համար դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել «տնտեսական անվտանգություն» կատեգորիայի իմաստալիսն և բովանդակային պատկերացումների էվոլյուցիան, համադրել այդ հասկացության առավել բնութագրական կողմերը,
 - հետազոտել պետության տնտեսական անվտանգության համակարգի բովանդակությունն ու կառուցվածքը, ինչպես նաև գնահատել ազգային-պետական շահերը տնտեսական անվտանգության համակարգում,
 - վերլուծել տնտեսական անվտանգությունը որպես համակարգ և հանրային բարիք՝ բացահայտելով երևույթի բնականոն կենսագործունեության հիմնական առանձնահատկությունները,
 - մշակել տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման նոր մեթոդաբանություն, որի հիման վրա հնարավոր կլինի գնահատել ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակը,
 - վերլուծել ՀՀ տնտեսության մակրոտնտեսական իրավիճակը տնտեսական անվտանգության տեսանկյունից և վեր հանել մակրոտնտեսական միջավայրի առավել դիսկային ու խոցելի հատվածները,
 - տնտեսության կառուցվածքի ձևախեղումը (դեֆորմացիա) դիտարկել որպես ՀՀ տնտեսական անվտանգության մակրոտնտեսական հիմնախնդիր և առաջադրել միջոցառումների համակարգ այդ հիմնախնդրի լուծման ուղղությամբ,
 - ամբողջական պահանջարկի առանձին բաղադրիչների վրա տնտեսական քաղաքականության ազդեցության ներուժի որոշման հիման վրա հաշվարկել ՀՀ պետական ծախսերի նպաստումը տնտեսական աճին՝ գնահատելով պետության հակապարբերաշրջանային քաղաքականության իրականացման արդյունավետությունը,
 - տնտեսական անվտանգության համալիր-գործոնային վերլուծության հիման վրա գնահատել տնտեսական անվտանգության ապահովման տնտեսական քաղաքականության արդյունավետությունը ՀՀ-ում,
 - բացահայտել ՀՀ տնտեսական անվտանգությանն ներքին ու արտաքին սպառնալիքներն ու մարտահրավերները, գնահատել վերջիններիս ազդեցությունը կայուն մակրոտնտեսական միջավայր ապահովելու համատեքստում,
 - բացահայտված սպառնալիքների և դրանց ազդեցության գնահատման հիման վրա մշակել տնտեսական անվտանգության համակարգի ապահովման հայաստանյան մոդելի հիմնական տարրերը,
 - բացահայտել Հայաստանի տնտեսական անվտանգության համակարգի կատարելագործման հիմնական առաջնահերթությունները՝ անվտանգության գնահատման չափանիշների որոշակիացման և տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման շեշտադրմամբ:
- Հետազոտության առարկան և օբյեկտը:** Հետազոտության առարկան ՀՀ տնտեսական անվտանգության մակրոտնտեսական հիմնախնդիրներն են, դրանց կարգավորմանն ուղղված տնտեսական քաղաքականության առաջնահերթությունները:

Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության համակարգն է:

Հետազոտության տեսամթերողաբանական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտության համար տեսամթերողական հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության հիմնարար դրույթները, համաշխարհային տնտեսության և Հայաստանի տնտեսության անվտանգության համակարգի վերաբերյալ հայ և արտասահմանյան հեղինակների աշխատությունները, ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության որոշումները, ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերը, միջազգային կազմակերպությունների զեկույցներն ու այլ հրապարակումները:

Հետազոտության իրականացման ժամանակ օգտագործվել են համակարգային մոտեցման և համեմատական վերլուծության, մաթեմատիկական վիճակագրության և մաթեմատիկական մոդելավորման, փորձագիտական գնահատման, գրաֆիկական վերլուծության ու համադրման, տվյալների զանգվածների վիճակագրական վերլուծության և պատճառահետևանքային կապերի ուսումնասիրության մեթոդները:

Հետազոտության տեղեկատվական ապահովման համար օգտագործվել են ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ ֆինանսների նախարարությունների, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական հրապարակումները, ՄԱԿ-ի, Համաշխարհային բանկի, Համաշխարհային տնտեսական ֆորումի, միջազգային այլ կազմակերպությունների և հետազոտական կենտրոնների զեկույցներն ու այլ հրապարակումները:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- Մշակվել է տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման նոր մեթոդաբանություն, որի ցուցանիշների և չափորոշիչների համակարգն ու դրանց հիման վրա որոշվող տնտեսական անվտանգության «տիրույթները»՝ միջին-ցածր եկամուտ ունեցող երկրների խմբի համար (Համաշխարհային Բանկի դասակարգմամբ) հնարավոր սպառնալիքների կանխատեսման և «վաղ» հայտնաբերման հնարավորություն են ընձեռում:
- Տնտեսական գործունեության առանձին տեսակների (ոլորտների) թողարկման ծավալների փոփոխությունների՝ ՀՆԱ-ի վրա ազդեցության չափի ու «որակի» որոշման միջոցով գնահատվել է հետագա տնտեսական աճի ապահովման հնարավորությունները՝ ՀՀ տնտեսության ձևավորված կառուցվածքի պայմաններում:
- Տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման փորձագիտական մեթոդով որոշվել են տնտեսության կառուցվածքային փոփոխությունների ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի տեմպերի վրա, որի հիման վրա գնահատվել է ճգնաժամերին ՀՀ տնտեսության դիմակայելու ունակությունը:

- Ինդեքսային գնահատման և տնտեսաչափական մոդելների կիրառմամբ հաշվարկվել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի ընդհանուր և առանձին ուղղությունների (տնտեսագիտական դասակարգմամբ) ազդեցության չափն ու բնույթը ՀՆԱ-ի աճի վրա, որի արդյունքներով գնահատվել է կարճաժամկետ ամբողջական պահանջարկի փոփոխության միջոցով հակապարբերաշրջանային քաղաքականության իրականացման արդյունավետությունը:
- Տնտեսական անվտանգության մշակված մեթոդաբանությամբ ՀՀ տնտեսական անվտանգության համալիր-գործոնային հետազոտության հիման վրա գնահատվել է տնտեսական անվտանգության ապահովման մակրոտնտեսական քաղաքականության արդյունավետությունը և բացահայտվել են տնտեսական անվտանգության հիմնական սպառնալիքները և մարտահրավերները:
- ՀՀ տնտեսական անվտանգության ներքին ու արտաքին սպառնալիքների չեզոքացման համատեքստում առաջարկվել են տնտեսական անվտանգության համակարգի ապահովման հայաստանյան մոդելի կառուցման հեռանայուններն ու տնտեսական անվտանգության համակարգի կատարելագործման հիմնական առաջնահերթությունները:

Հետազոտության գիտագործնական և կիրառական նշանակությունը:

Հետազոտության արդյունքներն ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Ատենախոսության դրույթների մի մասը, մասնավորապես՝ տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևավորման, իրական հատվածի պետական աջակցության մեխանիզմների արդյունավետության բարձրացման և կայուն, համաչափ տնտեսական աճի ապավումն վերաբերյալ հետազոտությունն արդեն իսկ օգտագործվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից՝ տնտեսական աճի ապահովման քաղաքականությունը մշակելու ընթացքում:

Ատենախոսության առանձին դրույթներ կարող են օգտագործվել ՀՀ տնտեսական անվտանգությունը բարելավելու քաղաքականության մշակման, ինչպես նաև առանձին հետազոտողների կողմից՝ ՀՀ տնտեսության մակրոտնտեսական միջավայրի կատարելագործման վերաբերյալ հետազոտությունների ժամանակ:

Հետազոտության հիմնական արդյունքների փորձարկումը: Հետազոտությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Մակրոէկոնոմիկայի» ամբիոնի նիստում, Հայաստանում անցկացված գիտաժողովներում և գիտական կոնֆերանսներում, ինչպես նաև արտերկրում ակցկացված գիտաժողովներում:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի 26 գիտական հրապարակումներում (ներառյալ՝ 2 մենագրություն), այդ թվում՝ 8-ը արտերկրում:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է 276 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության նպատակն ու խնդիրները, առարկան և օբյեկտը, ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել է աշխատանքի գիտական նորությունը, հետազոտության արդյունքների նշանակությունն ու փորձարկումը:

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսական անվտանգության ուսումնասիրման տեսամեթոդաբանական հիմքերը» գլխում քննարկվել է «անվտանգություն» և «տնտեսական անվտանգություն» կատեգորիաների բավանդակության վերաբերյալ տնտեսագիտական և քաղաքագիտական շրջանակներում ընդունված պատկերացումները, պետության տնտեսական անվտանգության համակարգն ու դրա կառուցվածքը, ինչպես նաև ազգային շահերը տնտեսական անվտանգության համակարգում:

Ազգային անվտանգություն հասկացության մեկնաբանություններում թեպետ կիրառվում են տարբեր մոտեցումներ և չափանիշներ, ինչը ենթադրում է հասկացության խորությունն ու ընդգրկվածությունը, այդուհանդերձ, բոլոր բնորոշումներում այն դիտարկվում է, որպես տարրերից (բաղադրիչներ) կազմված համակարգ՝ **ռազմական, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, մշակութային, տեղեկատվական անվտանգություն** և այլն: Այդ բաղադրիչները սերտորեն փոխկապակցված են և գտնվում են փոխազդեցության մեջ: Անվտանգության բոլոր նշված տարատեսակների շարքում հատուկ ուշադրության է արժանի **տնտեսական անվտանգությունը**, քանի որ այն հանդիսանում է մյուս բոլոր տեսակների ապահովման նյութական հիմքը:

Տնտեսական անվտանգության համակարգի հետազոտությունները բազմաթիվ են, որոնք երևույթը բացահայտում են ամենատարբեր տեսանկյուններից: Դրանց մի մասը անվտանգությունը դիտարկում են որպես **«տնտեսության վիճակ»**, մի մասը՝ **«գործողությունների ամբողջություն»** ուղղված վերջինիս ապահովմանը, իսկ որոշ դեպքերում այն դիտարկվում է, որպես տնտեսության ընդհանուր **համակարգային որակ**: Արևմտյան երկրներում առավել գերակշռում է տնտեսական անվտանգություն կատեգորիայի ուսումնասիրության ինստիտուցիոնալ մոտեցումը, երբ երկրի տնտեսական անվտանգության մակարդակը դիտարկվում է ինստիտուտների կայացվածության և արդյունավետ գործունեության տեսանկյունից¹:

Տնտեսական անվտանգությունը իրացվում է տնտեսության գործունեության և նրա վրա արտաքին ու ներքին սպառնալիքների ազդեցությունն ի հայտ գալու ընթացքում, ուստի, մակրոտնտեսական առումով, տնտեսական անվտանգությունը, հեղինակի բնորոշմամբ, տնտեսության **համակարգային-ֆունկցիոնալ հատկություն է**, այսինքն այն տնտեսության կենսունակությունն է՝ դիմակայելու արտաքին և ներքին սպառնալիքներին, որի պայմաններում ապահովված են:

¹ Cambridge Surveys of Economic Literature series. Cambridge University Press, 1990. p 19-21.

- տնտեսության մրցունակությունն ու կայուն աճը,
- պետական կառավարման ինստիտուտների տնտեսական անկախությունն և արդյունավետ գործունեությունը,
- հասարակության բոլոր շերտերի շահերի պաշտպանությունը:

Անկախ ուսումնասիրման տեսանկյունից, պետության տնտեսական անվտանգությունը ներկայացվում է որպես միմյանց հետ փոխկապակցված և փոխլրացնող տարրերից (բաղադրիչներից) կազմված համակարգ, որի յուրաքանչյուր բաղադրիչի անվտանգությամբ է պայմանավորված պետության ընդհանուր տնտեսական անվտանգության մակարդակը: Այսինքն, պետության տնտեսական անվտանգությունը համալիր հասկացություն է, և համակարգի ընդհանուր անվտանգությունը պայմանավորված է նրա առանձին բաղադրիչների անվտանգության մակարդակով: Ուստի, պետության առաջնային խնդիրն է տնտեսական անվտանգության համակարգի յուրաքանչյուր բաղադրիչի անվտանգության համապատասխան մակարդակի ապահովումը, որի պայմաններում իրացվում են նաև երկրի ազգային շահերը:

Ատենախոսության երկրորդ՝ «Տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման մեթոդաբանական մոտեցումները» գլխում տնտեսական անվտանգությունը դիտարկվել է որպես հանրային բարիք, ներկայացվել է վերջինիս մակարդակի գնահատման առկա մեթոդները, դրանցում կիրառվող ցուցանիշներն ու չափանիշները:

Երկրի տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման մեթոդաբանության, չափորոշիչների ընտրության, դրանցում ներառվող ցուցանիշների վերաբերյալ աշխարհում տարածված մոտեցումները կարելի է խմբավորել երկու հիմնական խմբերում: Համաձայն առաջին մոտեցման՝ տնտեսական անվտանգությունը գնահատվում է մեկ ամբողջական ինտեգրալ ցուցանիշի միջոցով: Երկրորդ մոտեցման համաձայն՝ տնտեսական անվտանգությունը գնահատվում ցուցանիշների համակարգի միջոցով, որոնցից յուրաքանչյուրը տնտեսության վիճակն առավել մանրակրկիտ վերլուծելու հնարավորություն է տալիս: Մոտեցումներից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները, որոնց վերլուծությունը հնարավորություն է տվել վեր հանել տնտեսական անվտանգության գնահատման կիրառվող մեթոդներում առկա թերություններն ու առաջարկել դրանց բարելավման ուղիներ, որոնց հիման վրա էլ ատենախոսությունում մշակվել է ՀՀ տնտեսական անվտանգության գնահատման նոր մեթոդաբանություն: Այն հիմնված է որոշակի սկզբունքների վրա, **որոնց պահպանումը հնարավոր կդարձնի ճշգրիտ գնահատել ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակը:** Դրանք են.

- ընտրված ցուցանիշները և դրանց շեմային մեծությունները պետք է ճկուն լինեն, կախված տվյալ պատմական ժամանակաշրջանից և երկրի տնտեսական զարգացման պայմաններից ու առաջնահերթություններից: Դրանք պետք է ընդունվեն և փոփոխության ենթարկվեն համապատասխան պետական մարմինների կողմից՝ որպես իրենց գործունեությունն ուղղորդող ցուցանիշներ,

- անվտանգության գնահատման ոչ բոլոր ցուցանիշերի համար համաշխարհային միջին մեծությունները կարող են ծառայել որպես շեմ: Անվտանգության գնահատման ցանկացած ցուցանիշի՝ աշխարհում առկա շատ մեծ ու շատ փոքր արժեքների «մեխանիկական» միջինացման արդյունքում որպես շեմ ստացված մեծությունը մի շարք երկրների համար կարող է անհասանելի լինել (որի պատճառով նրանք անընդհատ կլինեն շեմից ցածր՝ վտանգավոր գոտում), իսկ որոշ երկրների համար այդ մակարդակը վաղուց հաղթահարված է (հետևաբար, նույնիսկ ցուցանիշի Օ-ական աճի պարագայում այդ երկրները միշտ գտնվելու են շեմից բարձր՝ անվտանգ գոտում): Իսկ ամենամեծ խնդիրը, որն առկա է նշված մեթոդներով անվտանգության մակարդակի գնահատման պարագայում այն է, որ ցուցանիշների փոփոխության միտումները «չեն հուշում» վերահաս սպառնալիքների մասին: Այդ պատճառով, յուրաքանչյուր երկրի համար անհրաժեշտ է կիրառել տնտեսական զարգացման մակարդակով մոտ երկրների համար հաշվարկվող միջին և շեմային մեծություններ,
- միայն շեմային մեծությունների որոշմամբ տնտեսական անվտանգության գնահատման ցուցանիշների փոփոխության շարժընթացը գնահատել հնարավոր չի լինի, ուստի անհրաժեշտ է սահմանել շեմային մեծության և դրանից շեղվելու միջակայքեր (տիրույթներ), որոնք կբնորոշեն երկրի տնտեսական անվտանգության կամ վտանգավորության աստիճանը: Ատենախոսության մեջ հեղինակի կողմից առաջարկվում է կիրառել անվտանգության երեք տիրույթ. **Կայունության, միջին և վտանգավոր** (կամ կրիտիկական): Վերջինը շեմային մեծություններին մոտեցող տիրույթ է, երբ երկրի փաստացի ցուցանիշները ընդհուպ մոտեցել կամ հատել են անվտանգության շեմը, ուստի անհրաժեշտ է անհապաղ միջոցառումներ նախաձեռնել տնտեսական անվտանգության մակարդակը պահպանելու կամ անկումից խուսափելու համար:
- և վերջապես, երկրի տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման արդյունքում բացահայտված սպառնալիքներին հակազդող տնտեսական քաղաքականության գործիքների ընտրությունն ու արձագանքման արագությունը պետք է հիմնված լինի տնտեսական անվտանգության մակարդակը նվազեցնող **պատճառ-սպառնալիքների** և դրա արդյունքում առաջացող **հետևանք-սպառնալիքների** խմբավորման սկզբունքի վրա: Քաղաքականությունը պետք է ուղղված լինի պատճառ-սպառնալիքների ազդեցության նվազեցմանը, որի արդյունքում կնվազեն նաև հետևանք-սպառնալիքների ազդեցությունը:

Ատենախոսության երրորդ «<< տնտեսական անվտանգության ապահովման մակրոտնտեսական հիմնախնդիրները» գլխում << տնտեսության մակրոտնտեսական իրավիճակը վեր է լուծվել տնտեսական անվտանգության տեսանկյունից, իրականացվել է տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի վերլուծություն, ինչը հնարավորություն է տվել բացահայտել հիմնական մակրոտնտեսական հիմնախնդիրներն ու որոշել՝ տնտեսության ձևավորված կառուցվածքի պայմաններում տնտեսական աճի ապահովման հնարավորությունները:

Գնահատվել է ճգնաժամային և հետճգնաժամային փուլում տնտեսական աճի ապահովմանն ուղղված պետության տնտեսական քաղաքականության արդյունավետությունը, որն իրականացվել է հիմնականում կարճաժամկետ ամբողջական պահանջարկի խթանման (ընդլայնողական քաղաքականություն) միջոցով: Վերլուծելով ամբողջական պահանջարկի առանձին բաղադրիչների վրա տնտեսական քաղաքականության ազդեցության «ունակությունն» ու չափը, տնտեսաչափական մոդելների և ինդեքսային մեթոդների կիրառմամբ հաշվարկվել է պետական ծախսերի և արտահանման նպաստումը տնտեսական աճին՝ գնահատվել այդ ուղղությամբ պետության տնտեսական քաղաքականության արդյունավետությունը:

Զարգանալով իր ռեսուրսային կարողությունների հիման վրա, ՀՀ տնտեսությունը, 2000 թ.-ից մինչև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը տնտեսական աճի տեմպերով դասվել է աշխարհում ամենաարագ զարգացող տնտեսությունների շարքը²: 2000-2008 թթ. ՀՀ տնտեսությունը ենթարկվել է զգալի կառուցվածքային փոփոխությունների, որը պայմանավորված է տնտեսության երեք հիմնական ոլորտներում՝ արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության մեջ արձանագրված կառուցվածքային տեղաշարժերով: Արդյունաբերության ու գյուղատնտեսության մասնաբաժինները ՀՆԱ մեջ անընդհատ նվազել են. եթե 2000-2004 թթ. դրանք միասին ապահովել են ՀՆԱ շուրջ 45%-ը, ապա 2008-2010 թթ. այդ ցուցանիշը հասել է մոտ 30%-ի: Շինարարության դեպքում՝ 2000-2008 թթ. ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ մեջ անընդհատ աճել է և արդեն 2008 թ.-ին այն ապահովել է ՀՆԱ ավելի քան 1/4-ը: Ընդ որում, 2003-2008 թթ. շինարարության ծավալների աճը ՀՀ-ում հիմնականում տեղի է ունեցել օգտագործվող շինանյութերի և սարքավորումների ներմուծման հաշվին և չի նպաստել շինարարության հետ փոխակապակցված այլ ոլորտների և արտադրությունների համամասնական աճին: 2002-2007 թթ.-ին ՀՀ ներմուծումն ավելացել է շուրջ 4 անգամ, իսկ շինանյութերի ներմուծումը շուրջ 8.5 անգամ³: Արդյունքում, շինարարության և տնտեսության մյուս ոլորտների (այդ թվում՝ շինարարությանը սպասարկող արդյունաբերության) աճի տեմպերի միջև առաջացել է խզում, որն անընդհատ մեծացել է, ինչի հետևանքով շինարարությունը կարճեա թե «կտրվել է» տնտեսության մյուս ոլորտներից: Իսկ շինարարության աճի արդյունքում տնտեսության մեջ մնացել է միայն ոլորտի ավելացված արժեքը:

Զգնաժամից հետո՝ 2010 թ.-ից սկսած, արդյունաբերության և գյուղատնտեսության մասնաբաժինները ՀՆԱ-ում համեմատաբար կայունացել են, իսկ շինարարության անկումն ուղեկցվել է ծառայությունների մասնաբաժնի աճով: Արդեն 2014 թ.-ին ծառայություններն ապահովել է ՀՆԱ-ի կեսից ավելին, ինչը վկայում է 2008 թ. համեմատ ՀՆԱ-ի աճի «թիրախների» փոփոխության մասին: Սակայն արդյո՞ք ծառայությունների ոլորտը կարող է դառնալ ՀՀ-ում հետագա տնտեսական աճի ապահովման հիմնական «արքայուրը»՝ ստեղծելով ՀՀ

² USAID, “Economic Performance Assessment: Armenia”, april 2005, p.15.

³ Աղբյուր՝ ՀՀ ԱՎԺ վիճակագրական տարեգրքեր. 2006 թ.՝ էջ 468-478, 2009 թ.՝ էջ 435-445, 2012 թ.՝ էջ 445-456, 2015 թ.՝ էջ 446-457, հաշվարկները՝ հեղինակի:

տնտեսական անվտանգության երաշխիքներ: Այս հանգամանքը պարզելու համար ՀՀ-ում տնտեսական աճի ապահովման հնարավորությունները գնահատվել է տնտեսության ներկա կառուցվածքի պայմաններում: Այսպես, արտադրական եղանակով հաշվարկված ՀՆԱ-ն իրենից ներկայացնում է.

ՀՆԱ=Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով) + Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ), որտեղ.

Ավելացված արժեք=

$A1+A2+A3+A4+A5+A6+A7+A8+A9+A10+A11+A12+A13+A14+A15+ \text{ՖԱԱԶԾ}$:

A1-A15՝ ՀՆԱ-ի արտադրությունն ապահովվող տնտեսական գործունեության տեսակներն են (ՏԳՏԴ խմբ.2 (NACE 2))⁴:

Դիտարկվող փոփոխականների զույգային կոռելացիայի գործակիցների հաշվարկը ցույց կտա, թե որքանով են տվյալ գործոնները փոխկապակցված և զգայուն միմյանց ու հատկապես ՀՆԱ-ի նկատմամբ և հակառակը՝ որքանով է ՀՆԱ-ն զգայուն դիտարկվող փոփոխականների նկատմամբ:

Կոռելացիայի գործակիցի մեծությունը բնորոշում է փոխկապակցությունը, եթե այն մեծ է 0.5, ապա ցուցանիշները բարձր աստիճանի փոխկապված են, հակառակ դեպքում՝ ոչ⁵:

Աղյուսակ 1

Զույգային կոռելացիայի գործակիցների մատրից

	GDP⁶	A1	A10	A11	A12	A13	A14	A15	A2	A3	A4	A5	A6	A7	A8	A9
GDP	1,0	0,9	0,2	0,5	-0,2	0,7	0,4	0,3	-0,3	0,3	0,1	0,6	0,5	0,3	0,0	0,2
A1	0,9	1,0	0,2	0,5	-0,3	0,7	0,2	0,2	-0,2	0,3	-0,1	0,6	0,4	0,3	0,1	0,3
A10	0,2	0,2	1,0	-0,2	0,0	0,1	0,0	-0,3	0,2	0,2	0,2	0,2	0,0	-0,1	-0,2	-0,2
A11	0,5	0,5	-0,2	1,0	-0,2	0,7	0,5	0,6	-0,1	0,2	0,3	0,4	0,6	0,4	0,0	0,3
A12	-0,2	-0,3	0,0	-0,2	1,0	-0,1	0,1	0,1	0,2	0,1	0,0	0,1	0,2	0,4	0,1	0,4
A13	0,7	0,7	0,1	0,7	-0,1	1,0	0,6	0,5	-0,1	0,5	0,2	0,7	0,7	0,6	0,0	0,4
A14	0,4	0,2	0,0	0,5	0,1	0,6	1,0	0,4	-0,3	0,4	0,3	0,0	0,6	0,4	0,0	0,4
A15	0,3	0,2	-0,3	0,6	0,1	0,5	0,4	1,0	0,4	0,0	0,6	0,3	0,3	0,7	-0,3	0,3
A2	-0,3	-0,2	0,2	-0,1	0,2	-0,1	-0,3	0,4	1,0	-0,3	0,5	0,1	-0,2	0,3	-0,1	-0,1
A3	0,3	0,3	0,2	0,2	0,1	0,5	0,4	0,0	-0,3	1,0	0,3	0,3	0,7	0,1	-0,1	0,1
A4	0,1	-0,1	0,2	0,3	0,0	0,2	0,3	0,6	0,5	0,3	1,0	0,0	0,3	0,3	-0,5	-0,1
A5	0,6	0,6	0,2	0,4	0,1	0,7	0,0	0,3	0,1	0,3	0,0	1,0	0,6	0,5	0,2	0,2
A6	0,5	0,4	0,0	0,6	0,2	0,7	0,6	0,3	-0,2	0,7	0,3	0,6	1,0	0,4	0,0	0,2
A7	0,3	0,3	-0,1	0,4	0,4	0,6	0,4	0,7	0,3	0,1	0,3	0,5	0,4	1,0	-0,2	0,5
A8	0,0	0,1	-0,2	0,0	0,1	0,0	0,0	-0,3	-0,1	-0,1	-0,5	0,2	0,0	-0,2	1,0	0,4
A9	0,2	0,3	-0,2	0,3	0,4	0,4	0,4	0,3	-0,1	0,1	-0,1	0,2	0,2	0,5	0,4	1,0

⁴ՀՆԱ-ի կառուցվածքը ներկայացված է ըստ հետևյալ տարանջատման. A1- Գյուղատնտեսություն, A2- Հանքագործ. արդյունաբերությ. և բացահանքերի շահագործում, A3-Մշակող արդյունաբերությ., A4-Էլ. ներգիայի, գազի, ջրի արտադրությ. և բաշխում, A5-Շինարարությ., A6-Մանրածախ և մեծածախ առևտուր, A7-Հյուրանոցներ և ռեստորաններ, A8-Տրանսպորտ և կապ, A9-Ֆինանսական և ապահով. գործունեությ., A10- Անշարժ գույքի հետ կապված գործունեությ., A11-Պետ. կառավարում և պաշտպանությ., A12- Կրթություն, A13-Առողջապահ. և սոց. ծառայությ., A14-Կոմունալ, սոցիալական և անհատական ծառայություններ, A15-Տնային տնտեսությ. վարման ծառայություններ:

⁵ Gujarati, Basic econometrics, Fourth edition, p.121-131.

⁶ GDP=ՀՆԱ

Դիտարկելով ՀՀ ՀՆԱ-ի առանձնահատկությունները. օրինակ՝ GDP-A1՝ 0.9, կարելի է արձանագրել, որ ՀՆԱ-ի և գյուղատնտեսության աճը բարձր աստիճանի կոռելացված են, այսինքն, ՀՆԱ-ն բավական զգայուն է գյուղատնտեսության թղարկման ծավալի նկատմամբ և հակառակը:

Համանման ձևով վերլուծելով տնտեսական գործունեության բոլոր ոլորտները՝ առանձնացվել է 3 խումբ.

1. **ՀՆԱ-ն զգայուն է** (երբ $0.5 \leq$ կոռելացիայի գործակից ≤ 1)՝ գյուղատնտեսության, շինարարության, առողջապահության ոլորտներում ստեղծվող արդյունքի (ավելացված արժեքի) նկատմամբ:
2. **ՀՆԱ-ն համեմատաբար քիչ զգայուն է** (երբ $0 \leq$ կոռելացիայի գործակից ≤ 0.5)՝ մշակող արդյունաբերության, էլեկտրաէներգիայի, առևտրի, հյուրանոցների և ռեստորանների, տրանսպորտի և կապի, ֆինանսական և ապահովագրական գործունեության, անշարժ գույքի, պետական կառավարման, կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների, տնային տնտեսությունների վարման ծառայությունների ոլորտում ստեղծվող արդյունքի (ավելացված արժեքի) նկատմամբ:

ՀՆԱ-ն համեմատաբար քիչ զգայուն է, սակայն հակառակ ուղղությամբ է փոփոխվում (երբ $0 \geq$ կոռելացիայի գործակից ≥ -0.5)՝ հանքագործական արդյունաբերության և կրթության ոլորտում ստեղծվող արդյունքի (ավելացված արժեքի) նկատմամբ:

ՀՆԱ նվազման հավանականությունը բացառելու համար անհրաժեշտ կլինի հաստատել հետևյալ հանգամանքները. (դրանք անհրաժեշտ, բայց ոչ բավարար են)

- A. աճի միտում այն ոլորտներում, որոնց նկատմամբ ՀՆԱ բարձր զգայունություն ունի,
- B. թղարկման նույն ծավալները (0-ական աճ) կամ աճի միտում այն ոլորտներում, որոնք թույլ զգայուն են ՀՆԱ-ի նկատմամբ (2-րդ. կետ),
- C. թղարկման ծավալի ոչ մեծ փոփոխություններ ՀՆԱ-ի նկատմամբ քիչ զգայունություն ունեցող ոլորտներում (3-րդ կետ):

Տնտեսության ոլորտների և ՀՆԱ-ի փոխազդեցության զույգային կոռելացիայի գործակիցների վերը բերված մատրիցն ու դրա հիման վրա տնտեսության ոլորտների այս խմբավորումը կարելի է օգտագործել վերջիններիս թղարկման ծավալների փոփոխությունների ազդեցությամբ ՀՆԱ-ի փոփոխությունները կարճ ժամկետում կանխատեսելու և գնահատելու նպատակով: Կանխատեսման արդյունքների հիման վրա անկում, կամ աճի տեմպերի նվազում գրանցած ոլորտներում պետական խթանման կարճաժամկետ ծրագրերի իրականացման միջոցով հնարավոր կլինի պահպանել տնտեսական աճի տեմպերը «կառավարելիության» միջակայքում՝ թույլ չտալով արտաքին գործոնների ազդեցությամբ պայմանավորված (համաշխարհային ճգնաժամեր) խորը տնտեսական անկումներ:

Այս համակարգը, հեղինակի կողմից փորձարկվել է 2015 թ.-ի 1-ին եռամսյակում տնտեսության առանձին ոլորտների թղարկման ծավալների փոփոխությունների ազդեցությունը ՀՆԱ-ի վրա գնահատելու համար: Համաձայն ՀՀ

ԱՎԾ տվյալների՝ 2015 թ. հունվար-մարտ ամիսներին 2014 թ. հունվար-մարտի համեմատությամբ տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները.

A. կետի մասով՝

- գյուղատնտեսության ոլորտում ստեղծված արդյունքն **աճել է** 6.6%-ով,
- շինարարության ոլորտում ստեղծված արդյունքն **աճել է** 0.8%-ով,
- առողջապահության ոլորտում ստեղծված արդյունքը **նվազել է** 6.1%-ով:

Ընդհանուր առմամբ, **A կետի** մասով գրանցվել է **5340.3** մլն.դրամի **աճ**:

Նույն տրամաբանությամբ. **B կետի** մասով ընդհանուր առմամբ, գրանցվել է **46326.1** մլն դրամի **անկում**, իսկ **C կետի** մասով գրանցվել է **12332.6** մլն. դրամի **աճ**:

2015 թ. հունվար-մարտի ընդհանուր փոփոխությունը 2014 թ. հունվար-մարտի համեմատ կազմում է -29093.2 մլն դրամ:

Հարկերի աճը՝ 8510.1 մլն դրամ, ինչը չի չեզոքացնում նախորդ կետերում արձանագրված նվազումը: Այսպիսով, որ 2015 թ. առաջին եռամսյակում ՀՀ տնտեսության ձևավորված կառուցվածքի պայմաններում ՀՆԱ-ի անկում է արձանագրում:

ՀՆԱ-ի անկման պատճառներ կարող են հանդիսանալ.

2015 թ. հունվարից ԵԱՏՄ անդամակցության հետևանքով առաջացած ժամանակավոր անորոշությունները:

Դրսևորումը՝

- 2015 թ. հունվար-մարտին 2014 թ. նույն ժամանակահատվածի համեմատ արտահանման նվազում՝ 23.1%:
- 2015 թ. հունվար-մարտին 2014 թ. նույն ժամանակահատվածի համեմատ ներմուծման նվազում՝ 30.5%,
- ընդհանուր փոփոխությունը կազմել է -16097.6 մլն դրամ: Այս ցուցանիշը բնականաբար չի համընկնում ՀՆԱ-ի փոփոխության հետ, քանի որ այստեղ ներկայացված է նաև միջանկյալ սպառումը, որը ՀՆԱ-ում չի հաշվառվում:

Կարելի փաստել, որ տնտեսության ձևավորված կառուցվածքի պայմաններում, 2015 թ. տնտեսական աճի բեռը «ծանրանում է» հիմնականում գյուղատնտեսության և հանքարդյունաբերության ոլորտների վրա, որոնք ներկայացնում են տնտեսության իրական հատվածի արտահանելի ոլորտները: Այս հանգամանքը, միջազգային և տարածաշրջանային զարգացումների հետ մեկտեղ, առավել դժվարացնում են հետագա տնտեսական աճի ապահովման հնարավորությունները:

Այսպիսով, տնտեսական գործունեության տեսակների թողարկման ծավալների և դրանց արդյունքում ՀՆԱ-ի աճի տեմպերի փոփոխության միտումների կանխատեսման վերը նշված համակարգի կիրառումը տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում հնարավորություն կընձեռի տնտեսության ձևավորված կառուցվածքի պայմաններում տնտեսական աճի տեմպերը «կառավարելիության» միջակայքում պահպանելու՝ ապահովելով «օպերատիվ» միջամտություն անկում կամ նվազում արձանագրվող ոլորտներում:

Պետք է նշել, որ տնտեսության կառուցվածքային այս փոփոխությունների պայմաններում զգալիորեն նվազում է նաև ամբողջական պահանջարկի խթանման միջոցով տնտեսությանը պետական աջակցության արդյունավետությունը: Պահանջարկի խըթանման քաղաքականությունը բոլոր երկրներում իրականացվում է առավելապես պետական ծախսերի մեծացման միջոցով, քանի որ ամբողջական պահանջարկի մյուս բաղադրիչների վրա պետության միջամտությունը դրսևորվում է դրանց վրա անուղղակի ներգործության միջոցով, որոնց ազդեցությամբ փոփոխվում են նաև մակրոտնտեսական այլ ցուցանիշներ:

Ամբողջական պահանջարկի միջոցով տնտեսական աճի տեմպերի վրա պետական ծախսերի ազդեցության հնարավորության ու «որակի» վերլուծության հիման վրա գնահատենք ՀՀ պետական ծախսերի արդյունավետությունը (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Տնտեսական աճին պետական ծախսերի նպաստումը ՀՀ-ում⁷

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Տնտ. աճի տեմպ	13.2	14	10.5	13.9	13.2	13.7	6.9	-14.1	2.2	4.7	7.2	3.5	3.4
Պետ. ծախս. աճի տեմպ	8.0	18.5	6.8	24.9	15.3	31.9	27.7	14.6	2.7	3.3	1.9	12.9	8.4
Աճին պետ. ծախս. նպաստումը ⁸	0.2	1.4	1.0	1.9	1.5	0.5	-0.2	-0.1	0.5	0.3	0.5	0.5	0.4

Տնտեսական աճին պետական ծախսերի նպաստումը դիտարկվող ամբողջ ժամանակաշրջանում ոչ միայն մեծ չէ (առավելագույնը 1.9%՝ 13.9% տնտեսական աճի պայմաններում 2005 թ.), այլ նաև խիստ անհամաչափ և տատանողական բնույթ է կրել: Ընդ որում, ո՛չ պետական ծախսերի մեծությունը, ո՛չ տնտեսական աճի տեմպերը, ո՛չ պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը վճռորոշ ազդեցություն չեն ունեցել տնտեսական աճին պետական ծախսերի նպաստելու ցուցանիշի շարժընթացի վրա: Նույնիսկ երկնիշ տնտեսական աճի փուլում՝ 2002-2007 թթ., առանձին տարիներին տնտեսական աճին պետական ծախսերի նպաստելու չափը տատանվել է 0.2-1.9% միջակայքում: 2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիների պետական ծախսերի նպաստումը տնտեսական աճին ստացել է բացասական դրսևորում՝ համապատասխանաբար -0.2% և -0.1%:

Եվ այս ամենը տեղի է ունեցել նույնիսկ այն բանից հետո, երբ ճգնաժամին դիմակայելու համար ՀՀ կառավարությունը մշակել և կյանքի է կոչել տնտեսությանը պետական աջակցության մի շարք ծրագրեր, որոնք միտված էին ամբողջական պահանջարկի ընդլայնմանն ու տնտեսական աճի ապահովմանը, ընդ որում՝ այդ միջոցների մեծ մասը ՀՀ-ին տրվել են պետական պարտքի տեսքով:

⁷ Աղբյուրը՝ <http://www.armstat.am/am/?nid=126&id=01001> և <http://www.armstat.am/am/?nid=126&id=17002&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>, հաշվարկը կատարվել է ինդեքսային մեթոդով հեղինակի կողմից:

Այս ամենը վկայում է, որ ՀՀ-ում պետական ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ դեռևս փոքր է և չի կարող օպտիմալ համարվել, ավելին, այն բավական հեռու է նույնիսկ այս ցուցանիշի համաշխարհային միջինից: Եվ պետական ծախսեր/ՀՆԱ փոքր ցուցանիշը բնականաբար փոքր չափով է նպաստում նաև տնտեսական աճին, իսկ ճգնաժամային իրավիճակներում, երբ տնտեսությունն անկում է ապրում՝ պետական ծախսերի նույնիսկ 27.7% և 14.6% (համապատասխանաբար՝ 2008 և 2009 թթ.-ին) աճն ի զորու չէ կասեցնել անկումը, այլ դեռևս նպաստում է անկմանը համապատասխանաբար՝ -0.2% և -0.1%:

Պատկերն առավել հետաքրքիր է, երբ տնտեսական աճին պետական ծախսերի նպաստումը դիտարկում ենք ծախսերի կառուցվածքի տեսանկյունից: Այդ նպատակով ատենախոսությունում մշակվել է պետական ծախսերի՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ուղղությունների և ՀՆԱ-ի աճի կախվածության տնտեսաչափական մոդել՝ պարզելու համար, թե ծախսային որ ուղղությունները որքան և ինչ «որակի» ազդեցություն են ունենում տնտեսական աճի տեմպերի վրա:

Մոդելի կառուցման նպատակով օգտագործվել է 2002-2014 թթ. ՀՀ եռամսյակային ցուցանիշների⁹ փոփոխությունները՝ նախորդ եռամսյակի նկատմամբ: Դիտարկումների թիվը կազմել է 52, ընտրվել է գծային մոդել: Մոդելի գնահատումը կատարվել է փոքրագույն քառակուսիների մեթոդով (ՓՔՄ):

Ժամանակային շարքերի ստացիոնարությունը ստուգվել է Դիկլի-Ֆուլլերի ընդլայնված Միավոր արմատ թեստի միջոցով, համաձայն որի՝ բոլոր փոփոխականների պարագայում ADF Test Statistic < 5% Critical Value, ինչը վկայում է, որ դիտարկվող ժամանակային շարքը ստացիոնար է: Մոդելում Adjusted R-squared=0.89, սա նշանակում է, որ անկախ փոփոխականները 89%-ով են բացատրում կախյալ փոփոխականի փոփոխությունը, ինչը բավականին լավ արդյունք է: Մոդելը թույլատրելի է, քանի որ $|t\text{-Statistic}| > 2$ և Prob. < 0.05: Դիտարկված մոդելում 7 փոփոխականների ազդեցության գործակիցներն էլ վիճակագրորեն նշանակալի են: Ըստ Դարբին-Ուոտսոնի աղյուսակի՝ 7 անկախ փոփոխականի և 52 դիտարկման պարագայում $DL=1.081$, $DU=1.692$, ստացված մոդելում Durbin Watson stat=1.802, որը պատկանում է (DU , $4-DU$) միջակայքին, հետևաբար՝ չի մերժվում H_0 վարկածը (H_0 : սխալների միջև ավտոկորելացիա չկա):

Սխալների միջև տարացրվածության (հետերոսկեդաստիկության) կամ համացրվածության (հոմոսկեդաստիկության) առկայությունը ստուգվել է Ուայթի հետերոսկեդաստիկության թեստի միջոցով: Եթե Obs*R-squared Probability < 0.05, հետևաբար մերժվում է H_0 վարկածը (H_0 : սխալները հոմոսկեդաստիկ են): Այսպիսով՝ տարացրվածության հանգամանքը ևս չի ապացուցվում, ուստի, մոդելի արդյունքները վիճակագրորեն նշանակալի են: Մոդելի արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

⁹ Ցուցանիշները - ՀՆԱ՝ շուկայական գներով՝ GDP, աշխատանքի վարձատրություն՝ W, ծառայությունների և ապրանքների ձեռքբերում՝ AGS, տոկոսավճար՝ R, սուբսիդիաներ՝ Sub., դրամաշնորհներ՝ Trf., սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ՝ SPA), այլ ծախսեր՝ Oth.

ՀՀ ՀՆԱ-ի կախվածությունը պետական ծախսերից

Included observations: 52

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	0.568	1.5	0.3	0.006
R	-0.51	0.9	-0.5	0.005
AGS	0.21	0.4	0.5	0.000
W	0.32	0.2	1.6	0.000
Oth.	0.20	0.3	0.6	0.000
Trf	0.26	0.1	2.6	0.000
SPA	0.088	0.097	0.9	0.000
Sub	0.25	0.9	0.2	0.024
R-squared	0.91	Mean dependent var		0.56
Adjusted R-squared	0.89	S.D. dependent var		6.29
S.E. of regression	202.3	Akaike info criterion		1.3
Sum squared resid	1841889	Schwarz criterion		1.3
Log likelihood	-339.98	F-statistic		8.7
Durbin-Watson stat	1.802	Prob(F-statistic)		0.0000

Ստացված արդյունքները վկայում են, որ ծառայությունների և ապրանքների պետական գնումների, պետական համակարգի աշխատողների աշխատավարձի, դրամաշնորհների, սոց. նպաստների և կենսաթոշակների, սուբսիդիաների և այլ ծախսերի 1 միավոր աճը, տնտեսական աճին նպաստում են՝ համապատասխանաբար՝ 0.21, 0.32, 0.26, 0.088, 0.25 և 0.20 միավորով, իսկ տոկոսավճարներին ուղղվող ծախսերի միավոր աճը նվազեցնում է տնտեսական աճի տեմպերը 0.51 միավորով:

Այս ամենը վկայում է պետական ծախսերի կառուցվածքի և ծախսման ուղղությունների զգալի անարդյունավետության մասին: Այսպես, 2000-2013 թթ. պետական ծախսերը, կազմելով ՀՆԱ-ի միջինը 24-25%-ը, տնտեսական աճին լավագույն դեպքում նպաստել են ընդամենը 1.9% (13.9% աճի պայմաններում՝ 2005 թ.): Եթե տոկոսավճարների պարագայում տնտեսական աճին բացասական նպաստումը կարելի է տրամաբանական համարել, քանի որ այդ ուղղությամբ ծախսերի մի մասն, ուղղվելով արտաքին պարտքի սպասարկմանը, ՀՆԱ-ի արտադրությանը «չեն մասնակցում», իսկ ներքին պարտքի մասով տոկոսավճարների բացասական նպաստումը բացատրվում է ներդրումների դուրս մղմամբ, այսինքն պետական պարտատոմսերի բարձր տոկոսադրույքը ամբողջությամբ կլանում է ներդրումային ռեսուրսներն ու տնտեսության իրական հատվածում ներդրումները դառնում են ոչ գրավիչ, ապա պետական գնումների (որոնց մեջ ներառվում են նաև կապիտալ ծախսերը) փոքր նպաստումը (0.21) տնտեսական աճին պայմանավորված է տնտեսության կառուցվածքով և ներմուծման մեծ մասնաբաժնով. պետական ծախսերի ցանկացած ուղղություն ուղղակի կամ անուղղակի ձևով խթանում է ներմուծումը: ՀՀ-ում ներմուծման մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ բավական բարձր է, 2014 թ.-ին այն

կազմել է 43.4%¹⁰: Իսկ այդպիսի կառուցվածք ունեցող տնտեսությունում՝ ճգնաժամային իրավիճակներում պետական ծախսերի աճը ոչ թե կասեցնում, այլ նպաստում է տնտեսական անկմանը, քանի որ ներմուծումը խթանելու միջոցով արագանում է երկրից կապիտալի արտահոսքը: ՀՀ տնտեսական աճին պետական ծախսերի փոքր նպաստումը վկայում է նաև տնտեսությանը պետական աջակցության նպատակով իրականացվող ծրագրերի ու պետական պարտքի տեսքով ներգրավված միջոցների՝ տնտեսության մեջ տեղաբաշխելու և «աշխատացնելու» մեխանիզմների անարդյունավետության մասին:

Այսինքն, մի կողմից ՀՀ տնտեսության ներքին ցածր «դիմադրողականությունը», մյուս կողմից պետության տնտեսությանը «օգնության» մեխանիզմների ցածր արդյունավետությունը պայմանավորում են ՀՀ տնտեսության ճգնաժամերին դիմակայելու, ըստ էության, անընդունակությունը՝ հարուցելով երկրի տնտեսական անվտանգության համակարգի ապահովման լրջագույն դժվարություններ:

Ատենախոսության չորրորդ՝ «ՀՀ տնտեսական անվտանգության համակարգի համալիր հետազոտություն. Մարտահրավերներ և սպառնալիքներ» գլխում իրականացվել է ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի համալիր-գործոնային գնահատում, վեր է լուծվել տնտեսական անվտանգության ապահովման տնտեսական քաղաքականության արդյունավետությունն ու վերջինիս հիման վրա բացահայտվել են անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքները:

Համաձայն համաշխարհային բանկի դասակարգման՝ 2015 թ.-ին Հայաստանը գտնվում է միջին-ցածր եկամուտ ունեցող երկրների խմբում, որում ներառված են այն երկրները, որոնց 1 շնչին բաժին ընկնող համախառն ազգային եկամուտը կազմում է 1045-4125 ԱՄՆ դոլար¹¹: Տվյալ խումբը ներառում է 51 երկիր, որոնց տվյալների հիման վրա էլ ատենախոսության մեջ առաջարկվող մեթոդաբանությամբ իրականացվել է վերլուծությունը (աղյուսակ 4):

2005-2006 թթ. ՀՀ տնտեսությունը գտնվել է կայունության միջակայքում և այդ մասով մտահոգության աղիթ չի եղել: 2007 թ. թեև ապահովվել է 13.7% տնտեսական աճ, սակայն կայունության միջակայքից ՀՀ տնտեսությունն անցել է միջին տիրույթ, ինչը ենթադրում էր կանխարգելման միջոցառումների իրականացում, սակայն ոչինչ չի իրականացվել:

2008 թ.-ին ՀՀ-ն հայտնվել է վտանգավոր միջակայքում և տնտեսությունն այդ վիճակից դուրս բերելու համար կառավարությունը պետք է իրականացներ իրավիճակը կայունացնելու ուղղությամբ գործնական-կառուցողական միջոցառումներ՝ ինչը նույնպես չի արվել:

2009 թ.-ին ՀՀ տնտեսությունը հասել է կրիտիկական վիճակի (ճգնաժամ), ընդ որում 2009 թ.-ի ՀՀ տնտեսական անկման շեղումը դիտարկվող երկրների խմբի շեմային մեծությունից եղել է ահռելի՝ ավելի քան 12%:

¹⁰ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ 2013 թ.-ի տարեգիրք <http://armstat.am/file/doc/99477378.pdf>

¹¹ <http://data.worldbank.org/news/2015-country-classifications>

Միջին ցածր եկամտով երկրների տնտեսական աճի ցուցանիշների անվտանգության միջակայքերն ու ՀՀ տնտեսական աճը¹²

	2000	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Կայունության միջակայք	մինչև 10,2	մինչև 9,0	մինչև 10,4	մինչև 13,8	մինչև 8,9	մինչև 8,2	մինչև 9,0	մինչև 10,0	մինչև 8,3	մինչև 7,7	մինչև 7,6
Միջին միջակայք	10,2-5,5	9,0-6,3	10,4-6,5	13,7-6,9	8,9-7,1	8,2-4,2	9,0-6,3	10,0-6,0	8,3-5,0	7,7-5,5	7,6-5,8
Վտանգավոր միջակայք	5,5-1,0	6,3-1,6	6,5-1,6	6,9-1,2	7,1-1,1	4,2-(-1,9)	6,3-2,1	6,0-2,0	5,0-1,2	5,5-2,0	5,8-2,0
Կրիտիկական միջակայք	1,0-ից ցածր	1,6-ից ցածր	1,6-ից ցածր	1,2-ից ցածր	1,1-ից ցածր	-1,9-ից ցածր	2,1-ից ցածր	2,0-ից ցածր	1,2-ից ցածր	2,0-ից ցածր	2,0-ից ցածր
ՀՀ տնտ. աճը	5,9	13,9	13,2	13,7	6,9	-14,1	2,2	4,7	7,2	3,5	3,4

Այս հանգամանքը թերևս պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնց մեջ հարկ է առանձնացնել.

- ՀՀ տնտեսության կառուցվածքային անհամամասնությունների խորացումը, ինչը զգալիորեն սահմանափակում էր անկումը կասեցնելու՝ տնտեսության «դիմադրողականությունը»,
- կառավարության կողմից կարճաժամկետ պահանջարկի արդյունավետ կառավարման միջոցով տնտեսական աճը խթանելու դժվարությունները,
- պետության կողմից հակաճգնաժամային միջոցառումների իրականացման անհրաժեշտության «ուշ գիտակցումն» ու այդ քաղաքականության ցածր արդյունավետությունը:

Հետագայում՝ 2010-2011 թթ. ՀՀ տնտեսությունը կրիտիկական գոտուց վերադարձել է վտանգավոր միջակայք, իսկ 2012 թ.-ին նույնիսկ հայտնվել է միջին վիճակում, որը, սակայն, պահպանել չի հաջողվել և 2013-2014 թթ. ՀՀ-ն կրկին վտանգավորության միջակայքում է: Սա նշանակում է, որ ՀՀ կառավարության տնտեսական աճի ապահովման թիրախների ոչ ճիշտ ընտրության մասին, իսկ դրա ապահովման տնտեսական քաղաքականության ցածր արդյունավետությունը նորից կարող են հանգեցնել ճգնաժամի՝ վերադարձնելով տնտեսությունը կրիտիկական միջակայք:

Բնակչության 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի փոփոխությունները փաստում են տնտեսական անվտանգության առումով ՀՀ տնտեսության վիճակի նույն պատկերը, ինչ որ տնտեսական աճի տեմպերի պարագայում:

Ընտրված մեթոդաբանությամբ վերլուծության արդյունքների հավաստի-

¹² Աղբյուրը՝ համաշխարհային բանկի տվյալների էլեկտրոնային բազա՝ <http://databank.worldbank.org/data>, վերջին մուտքը՝ 11/12/2015 թ.

թյան մեջ համոզվելու համար ՀՀ տնտեսական աճի և 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի աճի ցուցանիշների միջոցով տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումն իրականացվել է նաև նույն ցուցանիշների համաշխարհային միջին մեծության հետ համեմատության միջոցով:

Այս դեպքում ՀՀ տնտեսական աճը համաշխարհային միջինի հետ համեմատած զգալիորեն բարձր է նախաճգնաժամային տարիներին, ինչը չի հուշում կառուցողական միջոցառումների իրականացման անհրաժեշտության մասին: 2005-2007 թթ. ՀՀ տնտեսական աճի տեմպը կազմել է՝ 13.5%՝ 3 անգամ գերազանցելով տնտեսական աճի համաշխարհային միջին մակարդակը (3.9%), 2008 ճգնաժամային տարում այդ խզումը գերազանցել է 4 անգամը (ՀՀ տնտեսական աճի տեմպը կազմել է՝ 6.9%, համաշխարհային միջինը՝ 1.5%), իսկ արդեն 2009 թ. գրանցած տնտեսական անկումը ՀՀ-ում գերազանցում է համաշխարհային միջինն ավելի քան 7 անգամ (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5

ՀՀ տնտեսական աճի տեմպերի համեմատություն տնտեսական աճի համաշխարհային միջին մեծության հետ¹³

	2000	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Տնտ. աճի համաշխարհային միջին մեծություն	4,3	3,6	4,1	3,9	1,5	-2,1	4,1	2,8	2,3	2,4	2,5
ՀՀ տնտ. աճի տեմպերը	5,9	13,9	13,2	13,7	6,9	-14,1	2,2	4,7	7,2	3,5	3,4

Այսինքն, այս մեթոդաբանությամբ իրականացված վերլուծությունը հնարավորություն չի տալիս ցուցանիշների փոփոխության շարժընթացի միջոցով կանխատեսել վերահաս սպառնալիքների (վտանգների) ի հայտ գալու կամ մոտենալու հավանականությունը, որով պայմանավորված նաև իրականացնելու արդյունավետ հակազդող քաղաքականություն:

Եթե դրան հավելենք նաև տնտեսական քաղաքականությանը բնորոշ ժամանակային խզումները (լագեր), որոնք ընկած են սպառնալիքի գիտակցման, գործողությունների իրականացման և արդյունքների ստացման ժամանակահատվածների միջև, ապա ակնհայտ է, որ այս մեթոդով երկրի տնտեսական անվտանգության մակարդակի հնարավոր փոփոխությունները կանխատեսելու և հակազդող քաղաքականության միջոցով «կառավարելիության» միջակայքում պահպանելը գրեթե անհնար է, քանի որ քաղաքականության ներքին լազը բավական մեծ է, ինչը առաջարկվող մեթոդի պարագայում կարելի է նվազագույնի հասցնել:

ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման մյուս ցուցանիշների վերլուծությունն իրականացվել է նույն մեթոդաբանությամբ: Իհարկե, ցուցանիշների երկրորդային բնորոշումը խիստ պայմանական է, քանի որ խոսքը վերաբերում է տնտեսական ու սոցիալական այնպիսի ցուցանիշների,

¹³ Աղբյուրը՝ համաշխարհային բանկի տվյալների էլեկտրոնային բազա՝

<http://databank.worldbank.org/data/reports.aspx?source=world-development-indicators#>, վերջին մուտքը՝ 11/12/2015 թ.

որոնց փոփոխությունը, թեև անմիջականորեն չեն հանգեցնի տնտեսական անկման, սակայն կարող են զգալիորեն նպաստել տնտեսության այդ վիճակում հայտնվելուն՝ նվազեցնելով տնտեսական անվտանգության ընդհանուր մակարդակը: Յուրաքանչյուր ցուցանիշի համար, ընտրված երկրների խմբում հաշվարկվել են միջին և անվտանգության շեմ հանդիսացող մեծությունները: ՀՀ համապատասխան ցուցանիշների համեմատությունը խմբի միջինի և շեմային մեծության հետ որոշել է միջակայքը (անվտանգ, վտանգավոր և կրիտիկական), որում գտնվում է Հայաստանը դիտարկվող ցուցանիշի մասով, որի հիման վրա որոշվել է նշված ցուցանիշն ապահովվող քաղաքականության մեջ փոփոխությունների մասշտաբներն ու հրատապությունը: Այս մեթոդաբանությամբ գնահատվել է ՀՀ տնտեսական անվտանգությունը՝ 2014 թ. արդյունքներով (աղյուսակ 6):

Աղյուսակ 6

ՀՀ տնտեսական անվտանգության համալիր-գործոնային գնահատումը 2014 թ.

Ցուցանիշ	Խմբի միջին մեծություն	Խմբի շեմային մեծություն	ՀՀ 2014թ. ցուցանիշներ	Մեկնաբանություն
Տնտեսական աճ	6.2-10.3	(-1.9)-(2.6)	3.6	շտապ կառուցողական քայլերի անհրաժեշտություն
1 շնչի հաշվով ՀՆԱ-ի աճ	5.8-10.4	(-0.4)-(2.0)	2.9	շտապ կառուցողական քայլերի անհրաժեշտություն
Գնաճ	3.1-7.6	12.4-19.9	3.0	-
Հարկեր/ՀՆԱ	14.3-17.2	3.4-8.1	21.9	-
ԳՀՓԿԱ/ՀՆԱ	0.39-0.59	0.07-0.11	0.30	կարելի է որոշակի քայլեր նախաձեռնել
ՕՈՒՆ/ՀՆԱ	4.2-8.1	0.5-1.2	3.7	շտապ կառուցողական քայլերի անհրաժեշտությ.
Արտահանում/ՀՆԱ	35.0-39.4	11.1-14.4	31.3	շտապ կառուցողական քայլերի անհրաժեշտությ.
Արտահանման աճ	15.4-23.4	(-8.0)-(3.6)	22.6	շտապ կառուցողական քայլերի անհրաժեշտությ.
Տեխնոլոգիատար ապրանքների արտահանման մասնաբաժին	8.2-14.7	0.5-1.0	3.0	շտապ կառուցողական քայլերի անհրաժեշտությ.
Ներմուծման մեջ սննդի ներմուծում	11.9-13.8	24.5-28.4	19.5	կարելի է որոշակի քայլեր նախաձեռնել
Արտաքին պարտք/ՀՆԱ	28.7-40.1	73.6-114.6	42.2	Կարելի է որոշակի քայլեր նախաձեռնել
Աղքատության մակարդակ	20.5-25.6	27.6-35.8	30	շտապ կառուցողական քայլերի անհրաժեշտությ.
Գործազրկության մակարդակ	5.0-5.9	14.2-16.0	17.6	շտապ կառուցողական քայլերի անհրաժեշտությ.
Ջինիի գործակից	0.343-0.372	0.515-0.590	0.321	-

Տնտեսական անվտանգության սպառնալիքների որոշման հարցում ատենախոսության մեջ հեղինակն առավելապես կենտրոնացել է մակրոտնտեսական ցուցանիշների և դրանց ապահովման տնտեսական քաղաքականության հիմնախնդիրներով պայմանավորված պատճառ-սպառնալիքների բացահայտման վրա, որոնք, իրենց հերթին, նպաստում են տնտեսական այլ սպառնալիքների դրսևորմանը: *ՀՀ տնտեսական անվտանգության ընդհանուր մակարդակի վրա ազդող ներքին սպառնալիքներն են.*

- Պետական կառավարման համակարգի ցածր արդյունավետությունը: Որպես չափորոշիչներ ընտրվել են տնտեսական անվտանգության գնահատման մակրոտնտեսական ցուցանիշների մշտադիտարկման համակարգի բացակայությունը (որը պետք է ազդակներ հաղորդի տնտեսական քաղաքականության մեջ փոփոխությունների անհրաժեշտության մասին) ու այդ ցուցանիշների կանխատեսման ցածր արդյունավետությունը:
- ՀՀ տնտեսության կառուցվածային ձևախեղումը (դեֆորմացիան): Ատենախոսությունում իրականացված՝ ՀՆԱ-ի հետ տնտեսության ոլորտների թողարկման ծավալների կոռելացիոն վերլուծությունը ընդգծել է այն խնդիրները, որոնք կապված են ՀՀ տնտեսության ձևավորված կառուցվածքի պայմաններում տնտեսական աճ ապահովելու դժվարությունների հետ:
- ՀՀ տնտեսության մոնոպոլացման բարձր մակարդակը: Այս հարցում ամենավտանգավոր հանգամանքը մենաշնորհների (այդ թվում՝ բնական) գործունեության կարգավորման, ինչպես նաև դրանց կառավարման գործընթացի նկատմամբ վերահսկողության «որակն է», ինչը դրսևորվում է պետության կողմից գործընթացին միջամտելու ցածր արդյունավետությամբ (կամ ընդհանրապես՝ անընդունակությամբ):
- Հակաճգնաժամային քաղաքականությունների իրականացման ցածր արդյունավետությունը (անընդունակությունը), ինչն արտահայտվում է ամբողջական պահանջարկի խթանման գործիքների՝ տնտեսության վրա թույլ ազդեցությամբ: Այս առումով, սպառնալիքի նշանակությունը կանխորոշում է հնարավոր ճգնաժամերի ընթացքում պետության հակաազդող քաղաքականություն իրականացնելու «անընդունակությունը», քանի որ արդյունավետ պահանջարկի կարգավորման միջոցով պետության հակապարբերաշրջանային (հակաճգնաժամային) քաղաքականության իրականացման համար ՀՀ-ում պետական միջոցների՝ տնտեսություն «հասցնելու» և «աշխատեցնելու» մեխանիզմները խիստ անարդյունավետ են:

Տնտեսական անվտանգության ընդհանուր մակարդակի ներքին ածանցյալ-սպառնալիքներից են նաև գործազրկությունը, աղքատության բարձր մակարդակը, արտագաղթը, ուղեղների արտահոսքը, կապիտալի արտահոսքը և այլն, որոնք, հեղինակի գնահատմամբ, անվտանգության ապահովմանն ուղղված քաղաքականության հետևանք-սպառնալիքներ են. դրանց ազդեցությունը հնարավոր է էականորեն նվազեցնել վերը դիտարկված պատճառ-սպառնալիքների ազդեցությունը թուլացնելու (կամ վերացնելու) միջոցով:

ՀՀ տնտեսական անվտանգության ընդհանուր մակարդակի վրա ազդող արտաքին սպառնալիքներն են.

- ՀՀ արտաքին տնտեսական տրանսպորտային հաղորդակցման ուղիների ոչ բավարար մակարդակը: Որպես այս երևույթի չափորոշիչ, պետք է նշել ՀՀ ծովային սահմանի բացակայությունը, իսկ ցամաքային ճանապարհով դեպի ծով ելքի միայն երկու սահմանակից տարածքների օգտագործման հնարավորությունը՝ Վրաստանի և Իրանի միջոցով:
- Տարածաշրջանային ենթակառուցվածքային ծրագրերից ՀՀ մեկուսացումը: Այս առումով, էական ազդեցություն կունենա Կարս-Թբիլիսի-Բաքու երկաթգծի կառուցումը, որը նախատեսված է շահագործման հանձնել 2016 թ.-ին: Արդյունքում, փաստացի «հավերժ» անգործության կմատնվի Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթուղին, անգամ Թուրքիայի հետ ՀՀ սահմանի վերաբացումից հետո: Գրեթե նույն քաղաքական դրդապատճառներով Ադրբեջանի և Թուրքիայի կողմից նույն խնդիրն է լուծվում նաև Բաքու-Թբիլիսի-Ջեհյան նավթամուղի կառուցմամբ՝ դրանով անբողջացնելով Ադրբեջանի և Թուրքիայի քաղաքական նպատակ հանդիսացող ՀՀ մեկուսացումը արտաքին աշխարհի հետ կապող տարածաշրջանային կոմունիկացիոն ծրագրերից:
- ՀՀ տնտեսական անվտանգության արտաքին տնտեսական սպառնալիքներ առկա են նաև ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված, մասնավորապես՝ ԵԱՏՄ անդամ երկրներում (մասնավորապես ՌԴ-ում) տնտեսական ճգնաժամը, որը հետևանք է ՌԴ-ի նկատմամբ հիմնականում Արևմուտքի կողմից կիրառվող տնտեսական ու քաղաքական բնույթի պատժամիջոցների, որոնք ուղղակի ածանցվում են ՀՀ տնտեսության վրա՝ մի շարք «խողովակներով»:
- ՀՀ արտահանման և ներմուծման ապրանքային և աշխարհագրական տարբերակվածության (դիֆերենցման) ցածր մակարդակը: 2000 թ.-ից ի վեր, ՀՀ արտահանման ավելի, քան 80%-ը բաժին է ընկնում 4 հիմնական ապրանքախմբերի, ինչը նշանակում է, որ ՀՀ արտահանումը բարձր աստիճանի կնտրոնացված է: Բացի այդ, ՀՀ արտահանումը կենտրոնացված է հումքի և ցածր ավելացված արժեք ունեցող ապրանքախմբերի վրա, իսկ տեխնոլոգիատար ապրանքների մասնաբաժինը խիստ փոքր է:
- ՀՀ արտաքին պարտքի բեռը: Ատենախոսության մեջ հիմնավորվել է, որ արտաքին պարտքի տեսքով ներգրավված միջոցների ՀՀ տնտեսության մեջ տեղաբաշխման և «օգտագործման» արդյունավետությունը խիստ ցածր է: Պարտքի մարումը հիմնականում ծանրանում է ապագա սերունդների վրա, և եթե նրկատի ունենանք, որ ՀՀ բնակչության միջին թվաքանակը շարունակական նվազման միտում ունի¹⁴, ավելի ակնհայտ են դառնում այն տնտեսական վտանգները, որոնք պայմանավորված են արտաքին պարտքի ծավալների աճով:

Աշխատանքի հինգերորդ՝ «ՀՀ տնտեսական անվտանգության ամրապնդման սոցիալ-տնտեսական նախադրյալներն ու հեռանկարները» գլխում ներկայացվել է տնտեսական անվտանգության ապահովման հայաստանյան մոդելի կառուցման հիմքերն ու նախանշվել այն հիմնական առաջնահերթությունները, որոնք պայմանավորված են ՀՀ տնտեսական անվտանգության հա-

¹⁴<http://armstat.am/am/?nid=126&id=11001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>

մակարգի կատարելագործման անհրաժեշտությամբ: Տնտեսական անվտանգության համակարգի ապահովումը ենթադրում է տնտեսությունում առկա գործընթացների և երևույթների խորը ու համակողմակի ուսումնասիրություն, դրանց զարգացման միտումների, ներքին կապերի կանխատեսման հնարավորություն: Հասկանալի է, որ տնտեսական անվտանգության համակարգը չի կարող նույնը լինել բոլոր երկրների համար, յուրաքանչյուր երկրում այն ունի իր յուրահատկությունները և պետք է կառուցվի միայն տվյալ երկրին բնորոշ մարտահրավերներին ու սպառնալիքներին հակազդման գործունե մեխանիզմների, գործիքների և տնտեսության վրա դրանց հնարավոր ազդեցության չափերի գնահատման հիման վրա: Այսինքն, խոսքն, ըստ էության, երկրի տնտեսական անվտանգության մակարդակի կառավարման համակարգի անհրաժեշտության մասին է, որը հնարավոր սպառնալիքների կանխատեսման միջոցով ազդակներ կհաղորդի տնտեսական քաղաքականության մեջ անհրաժեշտ փոփոխությունների մասին՝ ապահովելով դրանց արագ հակազդման հնարավորությունը:

Տնտեսական անվտանգության հայաստանյան մոդելը ենթադրում է տնտեսության կառուցվածքի փոփոխությունների և այն ապահովվող տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը՝ տնտեսական անվտանգությունը դիտարկելով որպես համակարգ:

Տնտեսության կամայական զարգացումները կանխելու, իսկ դրանց դեպքում առողջացման կամայական ծրագրերին միայն անհրաժեշտության պարագայում չըդիմելու համար չափազանց կարևոր է պետության կողմից տնտեսական անվտանգության ապահովման հայեցակարգի մշակումը, որը համահունչ կլինի 2007 թ. հաստատված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությանը¹⁵:

Երկրի տնտեսական անվտանգության ռազմավարությունը մշակվում է որոշակի հենաայուների վրա, որոնց ընտրությունը պայմանավորված է տվյալ երկրի համար տնտեսական անվտանգության էական սպառնալիքներով և զարգացման գերակայություններով, որից հետո թիրախավորվում են այն տնտեսական (հիմնականում մակրոտնտեսական) ցուցանիշները, որոնց միջոցով գնահատվում է անվտանգության աստիճանը (կամ սպառնալիքների ազդեցությունը): Իսկ այդ ցուցանիշների հիման վրա տնտեսական քաղաքականությանը տրվում են որոշակի «առաջադրանքներ», որոնց ծավալն ու հրատապությունը կախված է նրանից, թե տվյալ ցուցանիշի գծով երկիրը անվտանգության որ «միջակայքում է»:

ՀՀ տնտեսական անվտանգության համակարգում առաջնային է (առնվազն ՀՀ-ի համար) **կայուն, համաչափ տնտեսական աճի ապահովումը**: Ուստի, տնտեսական անվտանգության հայաստանյան մոդելի հենաայուներից մեկը պետք է հանդիսանա ՀՀ տնտեսական աճի ապահովումը: Ընդ որում, ցանկացած գնով տնտեսական աճի ապահովումը (միայն աճ ունենալու համար սկզբունքով), հիմնականում ունենում է կարճաժամկետ էֆեկտներ, ինչը չի կարող հանգեցնել տնտեսական զարգացման: Տնտեսության կառուցվածքային

¹⁵ Հավելված ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի ՆՀ-37Ն հրամանագրի, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, էջ 9:

ձևախոշորումների պայմաններում նույնիսկ երկնիշ տնտեսական աճը չի ուղեկցվել եկամուտների համամասնական աճով, որակավորված, բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծմամբ, չի նպաստել զբաղվածության մակարդակի աճին ու չի ապահովել տնտեսության տարածքային համաչափ զարգացում: Ուստի, առաջիկա տարիներին տնտեսական քաղաքականության առաջնային թիրախը պետք է լինի «քանակական» աճին զուգահեռ աճի «որակի» բարելավումը: Ընդ որում՝ տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ կլինի աճի տեմպերի գնահատման («քանակական աճ») չափանիշներ: Որպես այդպիսին կարող են հանդես գալ վերջինիս համեմատությունը նույն եկամտային խմբի միջին ցուցանիշի հետ, որից նվազ լինելու պարագայում պետք է շտապ միջոցառումներ իրականացնել առնվազն միջին ցուցանիշն ապահովելու համար:

Տնտեսության կառուցվածքային փոփոխությունների և «աճի բևեռների» տարբերակման ահնարաժեշտությունը պայմանավորել են տնտեսական անվտանգության մոդելի մյուս՝ **«տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևավորում»** հենասյան ընտրությունը: Տնտեսական աճի ապահովման գործում այս հենասյան ազդեցության գնահատման համար որպես չափանիշ կարող է ծառայել, ատենախոսությունում ներկայացված ՀՆԱ-ի աճի տեմպերի վրա տնտեսական գործունեության տեսակների (ըստ ՏԳՏԴ խմբ2, (NACE 2) դասակարգման) թողարկման ծավալների փոփոխությունների ազդեցության գնահատման տնտեսաչափական մոդելը, ըստ որի՝ այն ոլորտներում (տնտեսության արտահանելի հատվածի ոլորտներ), որոնց թողարկման ծավալների փոփոխության նկատմամբ ՀՆԱ-ն բարձր զգայունություն ունի (երբ $0.5 \leq$ կոռելացիայի գործակից ≤ 1), արտադրության ծավալների անկման պարագայում անհրաժեշտ կլինի կառուցողական միջոցառումներ ձեռնարկել: Այն ոլորտներում (ծառայություններ), որոնց թողարկման ծավալների փոփոխության նկատմամբ ՀՆԱ-ն համեմատաբար քիչ զգայուն է (երբ $0 \leq$ կոռելացիայի գործակից ≤ 0.5), անհրաժեշտ կլինի արտադրության ծավալների պահպանման ուղղված միջոցառումների իրականացում:

Տնտեսական աճի ապահովումն ինքնին տնտեսական անվտանգության ցանկալի մակարդակ չի ապահովում, այն պետք է զուգակցվի բնակչության սոցիալական վիճակի բարելավմամբ: Տվյալ պարագայում կարևորվում է **աղքատության և գործազրկության մակարդակների նվազեցումը**, որը պայմանավորել է վերջինիս՝ որպես ՀՀ տնտեսական անվտանգության մոդելի հենասյան ընտրությունը: Աղքատության և գործազրկության մակարդակների չափման և գնահատման պարագայում նույնպես կարելի է կիրառել եկամտային խմբի միջին մակարդակի հետ համեմատությունը:

Գործազրկության և աղքատության մակարդակների նվազեցման հնարավորությունները բխում են առավելապես համաչափ տարածքային զարգացման անհրաժեշտությունից, որն էլ պայմանավորել է ՀՀ տնտեսական անվտանգության արդյունավետ մոդելի «**տարածքային զարգացման մակարդակների միջև առկա խզման նվազեցում**» հենասյան ընտրությունը: Տարածքային անհամաչափությամբ պայմանավորված անվտանգության մակարդակի գնահատման չափանիշներ կարելի է ընդունել միջնաժամկետ հեռանկարում (օրինակ՝ 5-

7 տարում) տարածքների տնտեսական զարգացման տեմպերի և դրանց զարգացման մակարդակների աստիճանական մոտեցումը՝ միջին հանրապետական մակարդակին, իսկ երկարաժամկետ հատվածում (15-20 տարում)՝ տարածքների զարգացման տեմպերի մոտեցումը միմյանց և դրանց համաչափ զարգացումը:

Տնտեսական աճի ապահովման հենասյուներ ընտրելիս պետք է նպատակադրել, առաջին հերթին, **արտահանման ծավալների աճը**, քանի որ միայն ներքին պահանջարկի վրա հիմնված երկարաժամկետ տնտեսական աճ հնարավոր չէ ապահովել: Այս հենասյան ընտրությունը պայմանավորված է այն հատույցով, որն արտահանման ծավալների աճն ապահովում են տնտեսական աճի վրա: Ատենախոսությունում իրականացված տնտեսաչափական մոդոլների գնահատմամբ արտահանման միավոր փոխությունը ապահովում է ՀՆԱ-ի 0.42 միավոր աճ: Նշենք, որ ամբողջական պահանջարկի մյուս բաղադրիչների ազդեցությունը տնտեսական աճի տեմպերի վրա՝ անհամեմատ փոքր է, ուստի տնտեսական աճի ապահովման տնտեսական քաղաքականությունը պետք է առավելապես կենտրոնացած լինի արտահանման խրախուսման գործուն մեխանիզմների վրա:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության փոքր լինելու հանգամանքը, ներքին ռեսուրսների սահմանափակությունը, երկրի տնտեսական անվտանգության մոդելի հենասյուներից է նաև **օտարերկրյա ներդրումների ներգրավումը**: Որպես տնտեսական անվտանգության այս գործոնի չափանիշ դարձյալ պետք է դիտարկել ՕՌԻՆ/ՀՆԱ հարաբերակցության համեմատությունը նույն եկամտային խմբի երկրների միջին մեծության և կրիտիկական շեմերի հետ, որից ելնելով կորոշվի անհրաժեշտ քայլերի հրատապությունն ու «որակը»:

ՀՀ տնտեսական անվտանգության ապահովման մոդելի հենասյուների ու դրանց գնահատման ցուցանիշների համակարգի ընտրությունն ու դրանց մատվ առկա սպառնալիքների ազդեցության գնահատումը հնարավորություն են ընձեռում մատնանշելու առաջնահերթություններ, որոնք բխում են երկրի տնտեսական անվտանգության համակարգի կատարելագործման անհրաժեշտությունից:

Այս առումով, ՀՀ-ն չունի տնտեսական անվտանգության ապահովման հալեցակարգ, որից կբխի անվտանգության հենասյուների ընտրությունն ու դրանց հիման վրա կմատնանշվեն տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները: Իսկ տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգն ու անվտանգության «միջակայքը» (գոտին) կծառայեն որպես տնտեսական քաղաքականության արդյունավետության գնահատման չափանիշներ: Այսինքն, անվտանգության միջակայքը, որում կհայտնվի ՀՀ-ն այս կամ այն ցուցանիշով, կհանդիսանա որպես տվյալ ուղղությամբ տնտեսական քաղաքականության չափելի արդյունքը: Այս մոտեցումը հիմք կհանդիսանա նաև տնտեսական քաղաքականությունն իրականացնող պետական կառավարման մարմինների աշխատանքի արդյունավետության գնահատման համար: Բացի դրանից, տնտեսական զարգացման տարբեր ծրագրերում և ռազմավարություններում նախատեսված ծրագրային ցուցանիշները հիմք են հանդիսանում տնտեսական գործա-

կայների համար իրենց տնտեսական գործունեության պլանավորման համար: Պետության վարքագծի հաճախակի փոփոխությունները, ինչպես նաև կանխատեսման չենթարկվող գործոնների ազդեցությամբ տնտեսության վիճակի կտրուկ փոփոխությունները կարող է հանգեցնել «սխալ» թիրախավորումների՝ նպաստելով անարդյունավետ տնտեսավարմանը: Այս պատկերն առավել ամբողջական է դառնում, եթե նշվածներին հավելենք նաև զարգացման ռազմավարական ծրագրեր մշակող և իրականացնող պետական կառավարման մարմինների միջև առկա «գործառության» խզումը, վերջիններիս ոչ բարձր պրոֆեսիոնալիզմի ու անհետևողականությամբ պայմանավորված վտանգները: Ռազմավարական ծրագրերի և առհասարակ ցանկացած ոլորտի տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ թիրախավորվող ցուցանիշներն անհրաժեշտ է հանրությանը ներկայացնել զարգացումների բոլոր սցենարների համար՝ լավատեսական, միջին և վատատեսական, որպեսզի տնտեսական գործակալների համար տնտեսության վիճակի ու պետության վարքագիծը համարժեք փոփոխություններն լինեն առավելագույն չափով կանխատեսելի: Միևնույն ժամանակ, պետական կառավարումը բնակչության, տնտեսական գործակալների և կառավարման ստորին օղակների համար պետք է բացառի շրջադարձային փոփոխություններով պայմանավորված անորոշությունների առաջացման հավանականությունը:

Ատենախոսության եզրակացություններ բաժնում հեղինակն ընդհանրացրել է հետազոտության հիմնական արդյունքները, որոնք ամփոփված են հետևյալ դրույթներում.

1. ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությունների, դրանցով պայմանավորված տնտեսական զարգացման խոչընդոտների ու տնտեսական քաղաքականության հետ կապված խնդիրների պարագայում երկրի տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման աշխարհում ընդունված մեթոդների կիրառումը իրական արդյունքներ չեն ապահովում, ինչը պայմանավորել անվտանգության գնահատման նոր մեթոդաբանության անհրաժեշտությունը:
2. Առաջարկվող մեթոդաբանությամբ ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումն ու ցուցանիշների մշտադիտարկումը պետական կառավարման համապատասխան մարմինների համար կդառնա վերջիններիս գործունեությունն ուղղորդող ցուցանիշներ, իսկ դրա հիման վրա վարվող տնտեսական քաղաքականությունը միտված կլինի տնտեսական անվտանգության անհրաժեշտ մակարդակի ապահովմանը, որոնցից շեղումը կհուշի համապատասխան միջոցառումների անհրաժեշտության մասին: Այսինքն, տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգը կծառայի որպես տնտեսական քաղաքականության արդյունավետության գնահատման չափանիշ, իսկ «տիրույթը», որում կհայտնվի ՀՀ-ն այս կամ այն ցուցանիշով, կհանդիսանա, որպես տվյալ ուղղությամբ տնտեսական քաղաքականության չափելի արդյունքը:
3. Տնտեսական անվտանգության գնահատման համակարգի բացակայությունը և դրա հետևանքով սպառնալիքների «վաղ հայտնաբերման» անհնարի-

նության պայմաններում սպառնալիքներին հակազդող քաղաքականության միջոցառումները գործադրվում են բավական ուշացած, դրան գումարվում է նաև քաղաքականություններին բնորոշ ժամանակային խզումները, արդյունքում վերջիններիս ազդեցությունը խիստ փոքր է (այս հանգամանքով էր նաև պայմանավորված ՀՀ կառավարության հակաճգնաժամային քաղաքականության ցածր արդյունավետությունը):

4. 2002-2007 թթ. երկնիշ տնտեսական աճի փուլում ՀՀ տնտեսությունը կառուցվածքային տեղաշարժերի արդյունքում տեղի է ունեցել տնտեսության կառուցվածքի ձևախեղում (դեֆորմացիա), ինչը հանգեցրել է խորը տնտեսական անկման՝ սահմանափակելով նաև հետագա տնտեսական աճի ապահովման հնարավորությունները: Նշված ժամանակահատվածում տնտեսական աճն առավելապես ապահովվել է շինարարության ոլորտի հաշվին, որը հիմնված է եղել օգտագործվող շինանյութերի և սարքավորումների ներմուծման վրա և չի նպաստել շինարարության հետ փոխկապակցված այլ ոլորտների և արտադրությունների համամասնական աճին: Ի թիվս այլ գործոնների, դրան նպաստել է նաև ներմուծումը տեղական արտադրությամբ փոխարինելուն ուղղված տնտեսական քաղաքականության մեջ գործնական քայլերի բացակայությունը:
5. ՀՀ տնտեսության ձևավորված կառուցվածքի պայմաններում տնտեսության աճի «ունակության» գնահատումը՝ հիմնված տնտեսական գործունեության առանձին ոլորտների թողարկման ծավալների փոփոխության միտումների և ՀՆԱ-ի վրա վիրջիններիս ունեցած ազդեցությունների որոշման վրա, ցույց են տալիս, որ ՀՆԱ-ի զգայունությունը բարձր է գյուղատնտեսության, շինարարության, համեմատաբար թույլ է՝ մշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտների և խիստ ցածր է հանքագործական արդյունաբերության թողարկման ծավալների փոփոխությունների նկատմամբ: Այսինքն, գնողունակ պահանջարկի անկման պայմաններում տնտեսական աճի բեռը «ծանրանում է»՝ հիմնականում գյուղատնտեսության և հանքարդյունաբերության ոլորտների վրա, որոնք թեև ներկայացնում են տնտեսության իրական հատվածի արտահանելի ոլորտները, սակայն դրանց աճի «հատույցը» ընդհանուր տնտեսության վրա մեծ չէ:
6. ՀՀ տնտեսական աճին պետական ծախսերի նպաստումը ոչ միայն մեծ չէ, այլ նաև խիստ անհամաչափ և տատանողական բնույթ ունի, ընդ որում, ո՛չ պետական ծախսերի մեծությունը, ո՛չ տնտեսական աճի տեմպերը, ո՛չ պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը վճռորոշ ազդեցություն չունեն տնտեսական աճին պետական ծախսերի նպաստելու չափի վրա: Նույնիսկ երկնիշ տնտեսական աճի ժամանակահատվածում՝ 2002-2007 թթ., առանձին տարիներին տնտեսական աճին պետական ծախսերի նպաստելու չափը տատանվել է 0.2-1.9% միջակայքում: Այս ամենը վկայում է, որ ՀՀ-ում պետական ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ դեռևս փոքր է և չի կարող օպտիմալ համարվել, ավելին, այն բավական հեռու է նույնիսկ այս ցուցանիշի համաշխարհային միջինից: Բացի դրանից պետական ծախսերի ցանկացած ուղղություն ուղղակի կամ անուղղակի կերպով խթանում է ներմու-

ծումը, ինչն էլ իր հերթին, խթանում է երկրից կապիտալի արտահոսքը: Այս պայմաններում պետական ծախսեր/ՀՆԱ փոքր ցուցանիշը բնականաբար փոքր նպաստում է ունենում տնտեսական աճին, իսկ ճգնաժամային իրավիճակներում, պետական ծախսերի էական աճը ոչ միայն ի գործու չէ կասեցնել անկումը, այլև նպաստում է դրան:

7. Պետական ծախսերի փոքր նպաստումը տնտեսական աճին էականորեն սահմանափակում է նաև պետության հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետությունը, քանի որ ամբողջական պահանջարկի խթանման միջոցով տնտեսական աճի ապահովման մեխանիզմը՝ ՀՀ տնտեսության ձևավորված կառուցվածքի պայմաններում չի «աշխատում»:
8. ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի համալիր-գործոնային գնահատման արդյունքում պարզ է դառնում, որ մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների մասով Հայաստանը բավական հեռու է միջին ցածր եկամուտ ունեցող երկրների խմբի համանման միջին ցուցանիշներից՝ առանձին դեպքերում գերազանցելով նաև շեմային (կրիտիկական) մակարդակները: Սա նշանակում է, որ իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ են կառուցողական քայլեր, հակառակ դեպքում՝ տնտեսության անկումն անխուսափելի է: Մասնավորապես.

- գործազրկության մակարդակը հանրապետությունում 16-19% է, առավել մտահոգիչ է զբաղվածությունը կառուցվածքն ըստ տնտեսության ոլորտների՝ գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտներում զբաղվածների թիվը գրեթե նույնն է, այն դեպքում, երբ ծառայությունների ոլորտի ստեղծված արդյունքը 2,5 անգամ մեծ է գյուղատնտեսության թողարկումից, ինչը վկայում է գյուղատնտեսության ոլորտի ցածր արտադրողականության մասին:

- ՀՀ տնտեսական անվտանգության ամենաէական սպառնալիքներից է աղքատության բարձր մակարդակը, հատկապես աշխատող աղքատների առկայությունը, իսկ տնտեսական աճի ու նոր ստեղծված արդյունքի վերաբաշխման քաղաքականությունը չեն նպաստում աղքատ խավերի եկամուտների աճին, հետևաբար նաև աղքատության կրճատմանը:

- ՀՀ արտահանման մեջ 2001-2014 թթ. գերակշռում է ցածր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումը: Ընդ որում՝ 2001-2014 թթ. ընթացքում արտահանման կառուցվածքում աճել է ռետրոստար ապրանքների արտահանումը՝ ի հաշիվ միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքների արտահանման, որի նպաստումը տնտեսական աճին մեծ չէ: Իսկ ընդհանուր արտահանման կառուցվածքում՝ 4 ապրանքախմբերի բաժին է ընկնում ամբողջի 82.4%-ը, ինչը վկայում է արտահանման բարձր աստիճանի կենտրոնացվածության մասին: Սովորաբար, ՀՆԱ-ում արտահանման մեծ տեսակարար կշիռը վկայում է միջազգային շուկայում հայրենական արտադրանքի մրցունակության մասին: 2000-2014 թթ. ՀՀ-ում այս ցուցանիշը կազմել է միջին հաշվով 14.4%: Ըստ առանձին ապրանքախմբերի տվյալ այն ամենաբարձրը թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղների խմբում է, (միջինը 34%), ինչը նշանակում է, որ ՀՀ-ն մասնագիտացված է առավելա-

պես մետաղների արտահանման մեջ, որի մեծ մասը կազմում է չմշակված մետաղական հումքը:

- ՀՀ տնտեսական անվտանգության լրջագույն սպառնալիքներից է ՀՀ արտաքին պարտքի մեծությունը: 2000 թ.-ին ՀՀ արտաքին պարտքը շուրջ 10%-ով բարձր էր նույն եկամտային խմբի երկրների միջին ցուցանիշի համեմատ, որից հետո բարձր տնտեսական աճի ժամանակահատվածում, որը միաժամանակ ուղեկցվել է ԱՄՆ դոլարի ՀՀ դրամի նկատմամբ արժեզրկմամբ, արտաքին պարտքի բեռը հետևողականորեն նվազել է (տեղի է ունեցել պարտքի արժեզրկում), և արդեն 2008 թ.-ին կազմել ՀՆԱ-ի 16.4%: Սակայն, հետագայում համաշխարհային ֆինանսական ճգնաժամի արդյունքում բյուջեի աճող դեֆիցիտի ֆինանսավորման համար Հայաստանը «ստիպված էր» օգտագործել արտաքին աղբյուրներից ստացվող միջոցները՝ զգալիորեն մեծացնելով արտաքին պարտքի բեռը: Արդեն 2009 թ.-ին ՀՀ արտաքին պարտքը կազմեց ՀՆԱ-ի 34.3%, որը հետագայում անընդհատ աճել է 2015 թ.-ին հասնելով 42.2%:

- Ինքնին արտաքին պարտքի մեծությունը այդքան մեծ սպառնալիք չէ, եթե այն տեղաբաշխվելով տնտեսության մեջ նպաստում է տնտեսական աճի ապահովմանը՝ ստեղծելով նախադրյալներ պարտքի հետագա սպասարկման համար: 2008 թ.-ից մինչև 2015 թ. ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությունը արտաքին պարտքի տեսքով ներգրավել ու տեղաբաշխել է 2.7 մլրդ ԱՄՆ դոլար, որից ՀՀ Կենտրոնական բանկի պարտքը ընդամենը 476.3 մլն դոլար է: Այսինքն, այդ ընթացքում տնտեսությունում տեղաբաշխված շուրջ 2.2 մլրդ դոլարի պայմաններում անգամ առկա են տնտեսական աճ ապահովելու խնդիրներ, ինչը վկայում է ներգրավված միջոցների օգտագործման ծայրահեղ ցածր արդյունավետության մասին:

- Օտարերկրյա ուղղակի ներդրումների ցուցանիշը 2004-2008 թթ. էական աճ է գրանցել, սակայն հետագայում այն նվազել է, և արդեն 2013 թ. այս ցուցանիշն ավելի ցածր է եղել 2005 թ. մակարդակից: Սա, ըստ էության, նշանակում է, որ գործընկեր երկրները ՀՀ-ն չեն դիտարկում որպես կայուն տնտեսություն ունեցող երկիր, որտեղ կարելի է ներդրումներ անել: Եթե դրան էլ հավելենք նաև փոքր ներքին շուկա ունենալու հանգամանքը, որը խոշոր ներդրումների տեսանկյունից գրավիչ չէ, ապա այս առումով սպառնալիքները ՀՀ-ում առավել ակնհայտ են դառնում:

9. ՀՀ տնտեսական անվտանգության ապահովման մոդելը, հեղինակի պատկերացմամբ, պետք է ունենա հետևյալ հենասյուները՝ համապատասխան չափանիշներով, ինչը ենթադրում է անհրաժեշտ փոփոխություններ երկրի անվտանգության համակարգի ցուցանիշներն ապահովող տնտեսական քաղաքականության մեջ.

- «որակյալ» տնտեսական աճի ապահովում,
- գործազրկության և աղքատության նվազ մակարդակի ապահովում,
- արտաքին առևտրի արդյունավետ կառուցվածքի ապահովում,
- տնտեսության կառուցվածքի բարելավում՝ մեծ ավելացված արժեք ստեղծող և արտահանման կողմնորոշում ունեցող ոլորտների զարգացմամբ,

- տարածքային զարգացման մակարդակների միջև առկա խզման նվազեցում,
- օտարերկրյա ներդրումների արդյունավետ կառուցվածքի ապահովում:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ աշխատություններում.

1. Թ.Մկրտչյան, «Գլոբալացման ազդեցությունը ներքին տնտեսական հավասարակշռության վրա», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում» 1, «Энциклопедия-Армения» Ереван 2008, էջ 216-223:
2. Թ.Մկրտչյան, «Արտաքին տնտեսական հավասարակշռության ապահովման անհրաժեշտությունն ու դրա իրագործման մեխանիզմը», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում» 3, «Энциклопедия-Армения» Ереван 2008, էջ 216-225:
3. Վ.Հակոբյան, Թ.Մկրտչյան, ՀՀ հարկային համակարգի ազդեցությունը երկրի գործարար ակտիվության վրա, «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում» 4, «Энциклопедия-Армения» Ереван 2008, էջ 206-212:
4. Թ.Մկրտչյան, Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառների մասին, «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության տնտեսությունները համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում. հիմնախնդիրները և հեռանկարները» թեմայով միջազգային գիտաժողովի նյութեր (25-26 մարտի, 2010թ.), Խմբագրական խորհրդի համանախագահներ Յու.Մ.Սուվարյան, Ն.Գ.Կուլեցեցով, Եր., Տնտեսագետ, 2010, էջ 161-166:
5. Т.Мкртчян, Итоги реализации антикризисных програм в мире, Первый Евразийский экономический форум молодежи «Евразия trade», сборник научных трудов по тематическому направлению «Модель единого евразийского торгового пространства» / отв. за вып. Л.Г.Протасова, С.В. Шихалова: Мин-во образования и науки РФ, Урал. гос. экон. ун-т. Екатеринбург: Изд.во УрГЭУ, 2010. стр. 21-25:
6. Թ.Մկրտչյան, Փոքր և միջին ձեռնարկությունների հարկման առանձնահատկությունները ՀՀ-ում, Материалы международной научной конференции посвященной 80-летию Государственного Аграрного Университета Армении, ГАУА, Ред. кол. Д.П.Петрисян и др., Ереван, Изд.-во ГАУА, 2011, стр.184-188:
7. Ի.Տիգրանյան, Թ.Մկրտչյան, Տնային տնտեսությունների սպառողական և կազմակերպությունների ներդրումային վարքագծի վրա ազդող գործոնների էկոնոմետրիկ վերլուծությունը, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, №4, (28), Տնտեսագետ հրատ., Եր. 2012, էջ 16-27:
8. Ի.Տիգրանյան, Ք.Վարդանյան, Գ.Ավագյան, Թ.Մկրտչյան, ՀՀ ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերը, Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, №11 (149), նոյեմբեր, 2012, էջ 2-7:
9. Ի.Տիգրանյան, Թ.Մկրտչյան, Ք.Վարդանյան, Գ.Ավագյան, Լ.Մուրադյան, ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վրա իրական արդյունավետ փոխարժեքի ազդեցության գնահատումը տնտեսաչափական մոդելի օգնությամբ, Ֆինանսներ և էկոնոմիկա, № 11-12, /161-162/, նոյեմբեր-դեկտեմբեր, 2013թ., էջ 46-48:
10. Հ. Աղաջանյան, Ա.Վարդանյան, Թ.Մկրտչյան, Ա.Պետրոսյան, Հ.Մինասյան «Տնտեսական աճի որակը», 2012-2013թթ. ՀՊՏՀ ներհամալսարանական գիտական

- դրամաշնորհային հետազոտություն, Ծրագրի գիտական ղեկավար՝ Հ.Ի. Աղաջանյան, Եր., Տնտեսագետ հրատարակչություն, 2014թ. -86 էջ:
11. Կ.Գրիգորյան, Կ.Աթոյան, Թ.Մկրտչյան, Ս.Խաչիկյան, Տ.Թերզյան, Հ.Համբարձումյան, Հ.Արշակյան, Վ.Առաքելյան, «Տարածական զարգացում», ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի մատենաշար 6, Մասն. խմբ. Ի.Տ.Տիգրանյան, /Կ.Գրիգորյան և ուրիշ/ Եր. Տնտեսագետ, 2014թ. 88 էջ. (Ամբերդ մատենաշար):
 12. Թ.Մկրտչյան, Ս. Խաչատրյան, «Տնտեսական անվտանգության հասկացության վերաբերյալ պատկերացումների էվոլյուցիան», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N 9-10 (171-172), սեպտեմբեր-հոկտեմբեր, 2014թ. էջ 61-64:
 13. Ի.Տիգրանյան, Ք.Վարդանյան, Գ.Ավագյան, Թ.Մկրտչյան, Հ.Հովհաննիսյան, Գ.Գապոյան, Մ.Միքայելյան, Վ.Տիգրանյան, Ա.Հայրապետյան, «Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը-ՀՀում»: Մենագրություն. (տ.գ.թ., պրոֆ. Ի.Տ.Տիգրանյանի ընդհանուր խմբագրությամբ և ղեկավարությամբ). Մասնագիտական խմբագիրներ՝ Հ.Ա. Հովհաննիսյան, Ք.Ջ.Վարդանյան, Եր.: «Տնտեսագետ» 2015, 212 էջ:
 14. Т.Мкртчян, Воздействие государственных расходов на темпы экономического роста в Республике Армении, Вестник Ростовского государственного экономического университета (РИНХ), № 2 (50), Июнь, Ростов-на-Дону, 2015, стр. 108-113:
 15. Т.Мкртчян, С.Хачатрян, “Интересы экономических субъектов в системе экономической безопасности”, Модернизация экономики России: Отраслевой и региональный аспект: Материалы международной научно-практической конференции профессорско-преподавательского состава, молодых ученых 26 мая 2015г., Том I, Ростов-на-Дону, 2015г., стр.247-251:
 16. Т.Мкртчян, Structural Deformation of the Economy as a Factor Deterring the Economic Growth, International Conference on Trends in Economics and Management (ICTEHM'15) and 4th International Conference on Banking, Law, Education and Humanitie (ICBLEH'15), Organized by International Centre of Economics, Humanities and Management (ICEHM) and International Scientific Academy of Engineering&Tchnology, Aug.12-13, 2015 Pattaya (Thailand), p. 9-11:
 17. Т.Мкртчян, Types of economic security and criteria of its investigation, Международный центр научно-исследовательских проектов, Экономика, организация и управление предприятиями, отраслями, комплексами: Международная научная конференция МК-Э-2015-023, Москва, 30-31 августа, 2015г, стр. 277-283:
 18. Т.Мкртчян, State economic security system and it's components, 4th International Conference on Research in Humanities, Sociology and Corporate Social Responsibility, (RHSCSR'15) and International Conference on Banking, Business Management (BBM-2015), Orgganized by International Centre of Economics, Humanities and Managemement (OICEHM), Emirates Reserch Publishing (ERP), Emirates Association of Arts and Management Professionals (EAAMP), Sept. 25-26, 2015 Penang (Malasia), p.10-13:
 19. Թ.Մկրտչյան, «Երկրի տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման մեթոդաբանական մոտեցումները», ԳԻՏԵԼԻՔ՝ ՆՈՐԱՍԵՆՇՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ՀՊՏՀ 25-րդ գիտաժողովի նյութեր, (2015թ. Նոյեմբերի 11-13), II/ ՀՊՏՀ:-Եր.:Տնտեսագետ, 2015, էջ 258-266:

20. Թ.Մկրտչյան, «Տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման մեթոդաբանական խնդիրները», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա: ամսագիր, N 9-10 (181-182), 2015թ. էջ 96-98:
21. Թ.Մկրտչյան, «Տնտեսական անվտանգության արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Մենագրություն/ Թաթուլ Մկրտչյան; Մասն.խմբ.՝ Կորյուն Աթոյան. – Եր.; Հեղ. հրատ. 2016, 278 էջ:
22. Т.Мкртчян, Экономическая безопасность как общественное благо, Развитие науки в XXI веке, Научно-Информационный Центр «Знание», сборник статей XIVмеждународной конференции, 2 часть, г.Харьков, 16 июня, 2016, стр. 56-59:
23. Թ.Մկրտչյան, «ՀՀ տնտեսական անվտանգության համակարգի կատարելագործման առաջնահերթությունները», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա:, № 7-8 (190-191), Եր. 2016թ. էջ 94-99:
24. Կ.Աթոյան, Դ.Հախվերդյան, Թ.Մկրտչյան, Կ.Հակոբյան, Ա.Գրիգորյան «Մասշտաբային բնակչինարարությունը որպես ներքին արտադրության խթանմամբ, տնտեսական աճի ապահովման և համաչափ տնտեսական զարգացման ուղղություն», ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի մատենաշար 32, Մասն. խմբ. տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ե.Զաքարյան/Կ.Աթոյան և ուրիշներ/, Եր.- Տնտեսագետ-2016, ,146 էջ, (Ամբերդ մատենաշար):
25. Թ.Մկրտչյան, «ՀՀ տնտեսական անվտանգության խնդիրները տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի պայմաններում», «Ալլընտրանք» գիտական հանդես, # 3/հուլիս-սեպտեմբեր/, 2016, էջ 13-25:
26. Т.Мкртчян, “Особенности армянской модели экономической безопасности”, “Финансовые исследования”, Научно-образовательный и прикладной журнал Ростовского государственного экономического университета (РИНХ), № 3 (52), 2016, стр. 26-31:

“ПРОБЛЕМЫ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ”

Автореферат диссертации на соискание ученой степени доктора экономических наук по специальности 08.00.02.-“Экономика, управление хозяйством и его сферами”

Защита диссертации состоится 20 октября 2016г., в 14:00 на заседании специализированного совета 014 ВАК РА, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу:
г.Ереван, 0025, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению макроэкономических проблем экономической безопасности страны, оценке и выявлению путей повышения эффективности политики обеспечения экономической безопасности в РА.

Основной целью работы является макроэкономическая оценка экономической безопасности РА и выявление на основании последней существующих угроз и вызовов, что позволит разработать армянскую модель экономической безопасности.

Для осуществления этой цели, были поставлены и решены следующие основные задачи:

- изучать содержание и структуру системы экономической безопасности государства, а также оценить национальные интересы в рамках системы экономической безопасности;
- разработать новую методику оценки уровня экономической безопасности, систему критериев и показателей, на основании которых можно будет оценить уровень экономической безопасности РА;
- проанализировать макроэкономическую ситуацию в РА с точки зрения экономической безопасности и выявить наиболее рисковые и уязвимые секторы макроэкономической среды;
- рассматривать деформацию структуры экономики как основную макроэкономическую проблему экономической безопасности РА и предложить систему мероприятий, направленных на решение этой проблемы;
- на основании результатов определения воздействия экономической политики на отдельные компоненты совокупного спроса, вычислить, насколько государственные расходы РА содействуют экономическому росту, оценив эффективность антициклической политики государства;
- на основе комплексно-факторного анализа экономической безопасности, оценить эффективность экономической политики обеспечения экономической безопасности в РА;

- выявить внутренние и внешние угрозы экономической безопасности РА, оценить воздействие последних в контексте обеспечения стабильной макроэкономической среды;
- на основании выявленных угроз и оценки их воздействия, разработать основные элементы армянской модели экономической безопасности;
- определить основные приоритеты системы экономической безопасности Армении, акцентируя конкретизацию критериев оценки безопасности и повышение эффективности экономической политики.

Исследования и анализы, произведенные в рамках диссертационной работы, привели к ряду результатов, имеющих теоретическое, методическое и практическое значение, в числе которых следующие положения отражают научное новизну:

- Разработана новая методика оценки уровня экономической безопасности, система показателей и критериев которой, а также “домены” экономической безопасности, определяемые на их основании, предоставляют возможность для прогнозирования и “раннего” выявления возможных угроз для стран, имеющих средний-низкий доход (согласно классификации Всемирного Банка).
- Посредством определения степени и “качества” воздействия на ВВП изменений объемов производства отдельных видов (областей) экономической деятельности, оценена возможность обеспечения дальнейшего экономического роста в условиях сформировавшейся структуры экономики РА.
- Посредством экспертного метода оценки уровня экономической безопасности, определено воздействие структурных изменений экономики на темпы экономического роста РА, на основании чего оценена способность экономики РА “противостоять” кризисным ситуациям.
- С применением индексной оценки и эконометрических моделей, определено степень и характер воздействия государственных расходов РА на темпы экономического роста, в общем и по отдельным направлениям (согласно экономической классификации), по результатам чего оценена эффективность антициклической политики, основанной на управлении краткосрочного совокупного спроса.
- На основании комплексно-факторного анализа экономической безопасности РА по разработанной методике экономической безопасности, определено эффективность политики обеспечения экономической безопасности, и выявлены основные угрозы и вызовы экономической безопасности.
- В контексте нейтрализации внутренних и внешних угроз экономической безопасности РА предложены фундаментальные основы армянской модели обеспечения экономической безопасности и основные приоритеты усовершенствования системы экономической безопасности.

“ECONOMIC SECURITY ISSUES IN THE REPUBLIC OF ARMENIA”

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Science in the speciality 08.00.02 “Economics, Management of the Economy and its Spheres”

The defense of the thesis will take place on October 20, 2016, at 14:00 o'clock at 014 Council of Economics SCC RA at Armenian State University of Economics:
128 M.Nalbandyan str., Yerevan 0025

ABSTRACT

The thesis is devoted to the study of the macroeconomic issues related to economic security of the country, assessment and methods of enhancing the efficiency of the policy of ensuring economic security in the RA.

The main purpose of the thesis is macroeconomic assessment of economic security of the RA and identification of the existing threats and challenges on the basis of the latter, which will be a ground for development of the Armenian model of economic security.

In order to achieve this goal, the following principal tasks were raised and solved:

- examine the content and structure of the system of economic security of the country, as well as assess the national interests within the system of economic security;
- develop a new methodology of assessment of the level of economic security and a system of criteria and indicators of assessment of the economic security situation, on the basis of which it will be possible to assess the level of economic security;
- analyse the macroeconomic situation of the RA from the standpoint of economic security and disclose the most risky and vulnerable sections of the macroeconomic environment;
- consider deformation of the structure of economy as a principal macroeconomic problem of economic security of the RA and propose a system of measures for solution of this problem;
- on the basis of determination of the potential impact of the economic policy on individual components of filled demand, estimate contribution of the state expenditures to the economic growth, assessing the efficiency of implementation of the state countercyclical policy;
- on the basis of the complex-factorial analysis of economic security, assess the efficiency of the economic policy of ensuring economic security in the RA;
- identify the internal and external threats and challenges of economic security in the RA, assess the impact of the latter in the context of ensuring steady macroeconomic environment;

- on the basis of the identified threats and the results of assessment of their impact, develop the principal elements of the Armenian model of ensuring the system of economic security;
- identify the main priorities of improving the system of economic security of Armenia, emphasizing precision of the criteria of security evaluation and enhancement of the efficiency of economic policy.

The studies and analysis performed within the scopes of the thesis have yielded a number of theoretical, methodical, and practical results, of which the main provisions that reflect scientific novelty are as follows:

- A new methodology of assessment of the level of economic security has been developed, the system of indicators and criteria of which, as well as the “domains” of economic security determined on the basis of the latter, create an opportunity of forecasting and early detection of the potential threats that exist for a group of countries with medium-low income (according to the World Bank’s classification).
- By means of assessment of the extent and “quality” of the impact on the GDP produced by the changes in the volumes of output by individual types (sectors) of economic activity, the opportunities of ensuring further economic growth were assessed in terms of the moulded structure of the economy of the RA.
- Using the expert method of assessment of the level of economic security, the impact of structural changes of the economy on the rates of economic growth of the RA was determined, on the basis of which the capacity of the economy of the RA to confront crises was assessed.
- Using the index assessment and econometric models, the extent and character of the impact of the state expenditure of the RA in general and in separate directions (according to economic classification) on the rates of economic growth was estimated, and on the basis of its results the efficiency of implementation of the countercyclical policy was assessed, based on management of short-term filled demand.
- According to the developed methodology of economic security, on the basis of complex-factorial study of economic security, the efficiency of macroeconomic policy of ensuring economic security was assessed and the main threats and challenges of economic security were identified.
- In the context of neutralization of the internal and external threats of economic security, the basics of development of the Armenian model of ensuring the system of economic security and the main priorities of improvement of the system of economic security were proposed.

